



Հոգեւոր Աստաթեոք Ասենողն ԲԱՍԱՐ
"PAPÈRE"
 REVUE MENSUELLE RELIGIEUSE ARMÉNIENNE
 ORGANE DES ÉGLISES ÉVANGÉLIQUES ARMÉNIENNES DE FRANCE

Téléphone C. 03-97

Rédaction et Administration :
 7, Rue Papère — MARSEILLE

Ժե ճարի - ՄԱՐՏ 1939 15^{me} Année - Mars 1939

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ — Քրիստոսի թուղթը (Յ. Ն. Ղ.)	52
ՀՈԳ. ԿԵԱՆՔ — Աստուծոյ խողաղուցեան պաշտօնը (Թրգմ. Ն. Մ.)	33
ՇՆՈՐՀԱՋ ԾՈՎԷՆ — Անուանակ որդիի մը դարձը (Ալպէրթ Ե. Նորատունկեան)	35
Ս. ԳՐԱԿԱՆ ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ — Անօրէնութեան Խորհուրդը (Scofieldէն)	36
ԱՐՁԱԳԱՆՔ ՅԵՏ ՄԱՀՈՒ — Երկու Ագամներ (Գ. ! աքարեան)	38
ՃԷՅՄՍ ՀԸՏԱԸՆ ԹԵՅԼԸՐ — Ճաժրուն փոխուիլը (Թրգմ. Ն. Մ.)	39
ՇՈՂԵՐ ԵՒ ՇԱՂԵՐ ԿԵՆԱՅ ԱԾՈՒՆԵՐԷՆ — Աւետարան Անաստուածներու հա- մար — Դաշլիճին մէջ, ո՛չ թէ խոհանոցը — Երբ ձեռքդ կը խնդրուի (Հաւաքից՝ Վեր. Ժ. Կ. Պ.)	41
ՊԱՏՄԱԿԱՆ — Մեծ դէմքեր ու դէպքեր Հայոց հաւատոյ ընտանիքէն (Բրոֆ. Գ. Դ. Խայկեան)	43
ՊԱՏԱՆԵԱՅ — Աստուծոյ խօսքը (Եգուարդ Բագուպեան)	44
Հուրեր մեր սիրելի զինուորներէն	47
ԵՐԳ — Յիսուս ամենագեղեցիկը (Թրգմ. Յ. Ն. Ղ.)	48

Կողքին Յրդ ԷԶԻՆ ՎԵՐԱ

ԲԱՆԲԵՐ ֆոգեւոր ամսագիրները Թէեւ Ֆրանսահայ Աւետարանա-
կան եկեղեցիներու սլաշածնաթերթն է, այսու ամենայնիւ,
նպատակ ունի ծառայելու ամենուն, որոնք ճշմարտութիւնը
կը փնտռեն եւ ծարաւը կըզգան Աստուծոյ խօսքին անխաղախ
վկայութեան: Քանի որ Քրիստոս չեկաւ միայն կարգ մը
անհատներու համար, այլ ամենուն, բնատի ճշմարիտ «Բան»ին
ներկայացուցիչն ալ չճանչնար ո եւ է յարմոհանութիւն մը,
հապա մէկ է անոնց հետ, որոնք Քրիստոսի մէջ իրեն կը
միանան: ԲԱՆԲԵՐ կ'ուզէ ծառայել անոնց:

«ԲԱՆԲԵՐ» հոգեւոր ամսագիրները կը հրատարակուի Մարտէլլի մէջ 16 էջերով՝ (կողքէն զատ
անոր խմբագրական ժարմինն անդասներն են

վեր. Յ. Ն. ՂԱԶԱՐՈՍԵԱՆ, վեր. Ժ. Կ. ՊԱՐՍՈՒՄԵԱՆ, վեր. Ա. Օ. ՓԱՓԱԶԵԱՆ, վեր. Զ. Բ. ՊՈՒՏԱՔԵԱՆ
ԲՐՈՓ. Գ. Գ. ԽԱՅԻԿԵԱՆ, Պատ. Վ. ՍԱՀԱԿԵԱՆ, Պատ. Ի. ԱՐԱՆՆԱՄԵԱՆ, Պատ. Մ. ՎԷՔԻԼԵԱՆ

ԲԱՆԲԵՐԻ համար յօդուած կրնան գրել անոնք միայն, որոնք
գիտեն վերստին ծնունդն ու ֆոգեւոր կեանքը եւ անոր մէջ
ապրելու ամենօրեայ ուրախութիւնը կը վայելեն Քրիստոսով:
Յօդուածաշարքեր մինչեւ որ ամբողջութիւնով խմբագրութեան
ձեռքը չհասնին, նկատի չեն առնուիր:

Յօդուածներ կարելի եղածին չափ ընթերցելի եւ մեկնով գրուած
թուղթին մէկ կողմին վրայ միայն եւ ԿԱՐՃ ըլլալու են: Խմբա-
գրութիւնը յօդուածները յապարելու եւ սրբագրելու եւ օգտակար
ընթերցելու համար փոփոխութիւններ ընելու ինչպէս նաեւ զանոնք
չհրատարակելու իրաւունքը իրեն կը վերապահէ, քանզի իրօք
կուգան լաւ յօդուածներ որոնք երբեմն կրկնութիւն են
առաջուրնէ հրատարակուած խորհուրդներու: Այսպիսիներ զանց
կ'ընենք, ուրիշ յօդուածներու տեղ ապու համար:

—————

ԲԱՆԲԵՐԻ բաժանորդագրութիւնը տարեկան է եւ կանխիկ
Բաժանորդագրութիւնը կ'սկսի ամէն տարի ցունուարին
եւ կը վերջանայ Դեկտեմբերին:

— ԲԱԺՆԵԳԻՆՆ Ի —

Ֆրանսա 25 ֆրանք, Սուրիա 20¹ ֆրանք
Արտասահման Տոլար 1. 25

Դ Ի Ի Ր Ո Ի Թ Ե Ա Ն Հ Ա Մ Ա Ր
Հ Ե Տ Ե Ի Ե Ա Լ Բ Ա Յ Ա Տ Ր Ո Ի Թ Ի Կ Ն Ը

Ամերիկայէն travelers check, թղթադրամ
եւ ամերիկեան նամակադրօշմ կրնայ զրկուիլ:
Ուրիշ երկրներէ \$ 1.25-ի համարժէք ամէն տեսակ դրամ:

Յօդուածներ զրկուելու են Պատ. ՎԱՀԱՆ ՍԱՀԱԿԵԱՆԻ
Իսկ թղթակցութիւններ եւ դրամական առաքումներ
վեր. Յ. Ն. ՂԱԶԱՐՈՍԵԱՆԻ անուանով, երկուքն ալ
հետեւեալ հասցէով:—

Réd. «PANPÈRE» c/o Rev. H. N. GHAZAROSSIAN
7, Rue Papère

MARSEILLE (France)

Արմենի'ր գուն
որ կը յնանաս, եւ
կանգնէ մեռելնե-
րէն, ու Քրիստոս
քեզի լոյս պիտի
տայ:
Եփես. Է. 14

Քանզի ալ աս-
կէ քիչ մը ատենէն
Ան որ գալու է՝
պիտի գայ ու պի-
տի ջուշանայ:

Ուրեմն ա'լ վախճանք, որ չըլլայ թէ
Անոր Կանգիւսը մանելու խոստումնքէն որ մեզի մ'նացեր է,
ձեզմէ մէկը զրկուած գտնուի: Երբ. Գ. 1

Երբ. Ժ. 37

ժե. ՏԱՐԻ

ՄԱՐՏ 1939

ԹԻԻ 5

ԻՆՉ ԵՆ ՀԱԻԱՏԱՅԵԱԼՆԵՐԸ



Ք Ր Ի Ս Տ Ո Ս Ի Թ Ո Ի Ղ Թ Ը

Յայտնի ԸԼԼԱԼՈՎ որ դուք Քրիստոսի Թուղթն էք:
Բ. Կորն. Գ. 3

Այս ատենեակ մը տարիներ առաջ Քրիստոսի սիրովը վառուած եւրոպացի երիտա- սարդ մը Պօլսոյ փողոցներուն ու հրապարակ- ներուն վրայ, կամուրջին գլուխը կայնած կ'ա- դադակէր. «Ալլահտան մէքթուկ, Ալլահտան մէքթուկ»: Իրաւ ալ իր թեթեւ զրակալին վրայ շարած էր տասնեակներով պահարաններ և կուտար անոնց, որոնք կուգային իրմէ նամակ մը խնդրելու: Երբ նամակընկալը կը բանար պահարանը, անոր մէջ կը գտնէր Աւետարան մը կամ առակաց մը, որ կը ներկայացնէր Աստուծոյ եկած նամակը (*):

Յիրաւի Աւետարանները նամակներ էին: Ղու- կասի Աւետարանը նամակ մըն էր Թէոփիլոսի ուղղուած: Նոյնպէս Պօղոսի մեծ թուղթերը նա- մակներ են ուղղուած այն ատենուան որոշ եկե- ղեցիներու և անոնց հետ նաեւ մեզի: Անոնց մէջ կը յայտնուին Աստուծոյ նպատակները պատ- կանեալ եկեղեցիին հանդէպ, ինչպէս նաեւ մեզի որ երկու հազար տարիներ յետոյ եկած ենք: Անոնք ո՛չ միայն թուղթեր են եկեղեցի- ներուն, այլ նաեւ անհատ հաւատացեալներու, ինծի և քեզի սիրելի՛ ընթերցող:

Պօղոս առաքեալ սակայն հոս մեր ընթերցանին — Բ. Կորնթ. Գ. գլխուն առաջին համարներուն մէջ հարկ կը տեսնէ յանձնարարութեան մը

մասին խօսելու և կ'ըսէ թէ մենք անոնց պէտք չունինք, քանզի դուք էք մեր յանձնարարական նամակը, յայտնի ԸԼԼԱԼՈՎ որ դուք Քրիստոսի Թուղթն էք: Առաքեալը կը յայտարարէ թէ իրաւ երբ մէկը նոր տեղ մը երթայ պէտք ունի յանձ- նարարական նամակի մը, բայց ես պէտք չու- նիմ, քանի որ Ես զձեզ ունիմ իբր իմ յանձնա- րարական նամակներս, իմ սրտիս վրայ գրուած (Իմ գաւակներս, իմ միջոցաւ Փրկիչը գտնող- ներ), քանի որ դուք Քրիստոսի նամակներն էք:

Պօղոս առաքեալ հոս կը ներկայացնէ հաւա- տացեալներու տարբեր մէկ բնոյթը: Անոնք կանչուած են Քրիստոսի նամակներն ԸԼԼԱԼՈՎ:

Ի՞նչ է նամակը: — Նամակը գրաւոր խօսակ- ցութիւն մըն է, թուղթ մը, որ կը պարունակէ պատգամ մը նամակագրէն զայն ընդունողին: Կան շատ մը տեսակ նամակներ. — սիրոյ նամակ, յանդիմանական, սպառնական, հաշուեյարդարի պաշտօնական նամակ, եւայլն: Հետեւաբար երբ հաւատացեալները Քրիստոսի նամակներն են, անոնք պատգամներ են Անոր կողմէ առ աշխարհս, ու երբ մենք մեր աչքերով աւելի խորը թա- փանցենք այդ նամակներուն և մանրակրկիտ քննենք զանոնք, որքա՛ն աւելի պիտի գիտակ- ցինք հաւատացեալին կոչման ու անոր արժե- քին՝ այս աշխարհի վրայ:

Հաւատացեալը Աստուծոյ որոշուած սիրոյ նամակ մըն է: Երբեմն գոցուած նամակներու վրայ կը տեսնենք տպուած համարներ կամ փակցուած պիտակ մը, «Աստուած սէր է»: Նամա-

(*) Գեղեցիկ ներշնչում մըն էր այս երիտասարդին, որով հնազանդեցաւ եւ շարունակեց, մինչեւ որ կը կար- ծեմ օրին մէկը ոստիկանութիւնը զինքը վճարեց թուրքիոյ նոխկին մայրաքաղաքէն:

կարերն ու նամակընկալը դեռ նոյնիսկ անուն չկարգացած կը կարդան այդ աչքառու պարզ խօսքը: Աշխարհ հաւատացեալ մը տեսածին պէս, այդ վկայութիւնը կ'ընդունի, ընդունելու է, Աստուած սէր է: Անիկա այնքան սիրեց Յակոբը, Յովհաննէսը... մինչեւ իր միածին Որդին տուաւ: Աստուած աշխարհը չէ՛ մոռցած, իր Որդին զրկած է — Յովհաննէս անոր սիրոյն մէկ պիտակն է (étiquette):

Այս սիրոյ նամակին մէջ հրաւէր մըն ալ ծրարուած է: Սէրն Աստուած կը կանչէ. «Եկէ՛ք ինծի բոլոր յոգնած ու բեռնաւորուածներ, Ես ձեզ կը հանդէսեցնեմ»: Աստուած քեզ կը սիրէ:

Ու աշխարհս կը կարդայ, հաւատացեալի մը հանդիպումին Աստուծոյ է կեանք նամակը թէ՛ Աստուած քեզ կը սիրէ, Աստուած քեզ կը կանչէ, ապաշխարէ՛: «Դարձէ՛ք, դարձէ՛ք, ձեր չար ճամբաներէն, վասնզի ինչո՞ւ կորսուիք», «Ես կենդանի եմ կ'ըսէ Տէրը, որ ամբարիշտին մեռնիլը չեմ ուզեր»: «Ձեր մարմիններէն քարեղէն սիրտը պիտի հանեմ, ու ձեզի մարմնեղէն սիրտ պիտի տամ. և իմ Հոգիս ձեր ներսիդին պիտի դնեմ»: Ամենաաչքառու նամակ մը չէ՞ր Նոյ իր ժամանակին համար: Իր ժամանակի մարդիկ հարիւրաւոր տարիներ կարգացին անոր դէմքին վրայ Աստուծոյ սիրոյն հրաւէրը ու վերջին հարիւր տարիներուն մէջ, երբ նա տապանը կը շինէր, կրկին կարգացին ու լսեցին թէ Աստուած սէր է և Անիկա ամբարշտին կորուստը չուզեր, հապա որ անիկա դարձի գայ:

Միսինար մը Աստուծոյ սիրոյն կենդանի նամակն է իր գացած տեղի հեթանոսին, մահ-մէտականին ու քիւրտին ուղղուած:

Հաւատացեալը սիրոյ յանձնարարական նամակ մըն է, ըսելով թէ այս կեանքը քեզի համար ալ ապրիլ կարելի է: Միթէ Յովսէփ ցցուն յանձնարարական մը չէ՞ փորձութեանց մէջ գտնուող և բարոյական վտանգներու ենթակայ բոլոր երիտասարդներուն՝ թէ կարելի է սուրբ կեանք մը ապրիլ: Յեսուի մէջ չէ՞նք տեսներ հաւատոյ կեանքի և Սուրբ Հոգիին յաղթական ուժերուն արդիւնաբերումը: Դանիէլ յանձնարարական մը չէ՞ կորովի կեանքի և անընկճելի հաւատոյ յաղթութեանց՝ յորձանուտ ընկերային ու քաղաքական լպրծուն շարժումութեան մէջ:

Հաւատացեալը Սուրբ Հոգիին յորդորական և յանդիմանական մէկ նամակն է աշխարհի ուղղուած: Անիկա կը յանդիմանէ աշխարհը այս

նամակով մեղքի համար: Անիկա կը սրբէ, կը մխիթարէ, կ'ուրախացնէ հաւատացեալը իր բոլոր պարագաներուն (տրտում կամ ուրախ, յաջող կամ անյաջող) մէջ, ու կը յանդիմանէ զայն ըսելով՝ բաւական չէ՞ որ կուրութեան և անզգայութեան մէջ տուայտիս, թօթուէ՛ մեղքը, հրաժարէ՛ անկէ, Ես քեզի մխիթարութիւն պիտի ըլլամ, ինչպէս եղայ միւսին: «Հնազանդութիւնը զոհէն ու խօսք մտիկ ընելը խոյերու ճարպէն աղէկ է»: «Եթէ աղէկ ընես», ընդունելի չըլլա՞ր, եթէ աղէկ չընես, մեղքը դրանք քով պառկած է»: «Այսօր կեանքը ու մահը, օրհնութիւնը ու անէծքը ձեր առջեւ դրի. ուրեմն կեանքը ընտրէ որպէսզի ապրիս»: «Խօսքը քեզի մօտ է քու բերնիդ մէջ և քու սրտիդ մէջ է, վասնզի եթէ քու բերնովդ Յիսուսը Տէր խոստովանիս, ու քու սրտիդ մէջ հաւատաս թէ Աստուած զԱնիկա մեռելներէն յարուց, պիտի փրկուիս»:

Հաւատացեալը սպառնական նամակ մըն է զրկուած անապաշխար աշխարհի, արդարադատ և արդարակշիռ Աստուծոյ թէ Աստուած մեղաւորին ամեն օր բարկացած է: «Ձեր մեղքը ձեզ պիտի գտնէ»: «Դուն արիւնը չատելուդ համար, արիւնը քեզ պիտի հալածէ»: «Եթէ զիս մերժելով ապստամբիք, սուրը պիտի ուտէ ձեզ»: «Բանի՛ անգամ քու տղաքներդ ժողվել ուզեցի... և դուք չուզեցիք: Ահա ձեր տունը ձեզի աւերակ պիտի մնայ»: «...Անկէ ետեւ մեղքերու համար ուրիշ զոհ չմնար, հապա զարհուրելի սպասել մը դատաստանին» (Եբր. Ժ. 26, 27): «Ո՛վ որ կենաց գիրքին մէջ գրուած չգտնուեցաւ, կրակի լիծին մէջ ձգուեցաւ»:

Հաւատացեալը Քրիստոսի կողմանէ պաշտօնական նամակ մըն է: Պօղոս առաքեալ զմեզ դեսպաններ կը կոչէ: Դեսպան Քրիստոսի, որ յայտնելով ամբողջ ճշմարտութիւնը և բնական, մեղաւոր մարդուն սպառնացող վտանգը, դեսպանութիւն կ'ընէ Քրիստոսի կողմէ աղաչելով մեղաւորին որ նա հաշտուի Աստուծոյ հետ:

Ո՛վ, մեղաւոր հոգի, երբ տեսնես Քրիստոսի մէկ նամակը եղող ո եւ է հաւատացեալ մը, գտի՛ր անոր մէջ դեսպանը, որ անուր կ'աղաղակէ քեզի. «Հաշտուէ՛ Աստուծոյ հետ»:

Սիրելի՛ հաւատացեալներ. յայտնի ըլլայ ձեզի որ դուք Քրիստոսի թուղթն էք: Ուրեմն որպէս այն ալ կարգացուինք: Տէրը օգնէ: Տէրը յաջողէ:



ԱՍՏՈՒԾՈՅ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ

ՊԱՀԱՆՈՐԻԸ

«Աստուծոյ խաղաղութիւնը»

ՓԻԼ. Դ. 7

Անդադար աղօթքի տրամադրութեան մէջ գտնուելու հետեւանքը պիտի ըլլայ Աստուծոյ խաղաղութիւնը: Բարեպաշտութեան շաւիղին մէջ քալողներուն օրհնեալ պարգեւը պիտի ըլլայ խաղաղութիւնը: Եթէ շարունակ աղօթքի տրամադրութեան մէջ ապրինք, եթէ փոխանակ մեր պիտոյքներուն համար հոգ ընելու՝ վստահութեամբ ու աղաչանքով պահոնք Տէրոջը ներկայացնենք ու երախտագիտութեամբ գոհութիւն մատուցանենք, անշուշտ Աստուծոյ խաղաղութեամբ պիտի պահուինք ու պաշտպանուինք:

Խաղաղութիւնը բառ մըն է որ շատ սխալ կը հասկցուի: Խաղաղութիւն մասնանշող նմանութիւններ ու նշանակներ կը ցուցնեն թէ մարդիկ որքան խեղաթիւրած են անոր իմաստը: Մեռելի մը սենեակը մտնելով, անոր ծալուած ձեռքերն ու զոցուած աչքերը կը տեսնենք ու ակամայ կը փսփսանք, «Ի՞նչ խաղաղութիւն»: Կամ թէ մեծ քաղաքի մը ձայնէն ու աղմուկէն հեռանալով լեռներու մէջ փոքրիկ անկիւն մը կը գտնենք ու թագուն լեռնալճակի մը մէջ վեհ ամպերուն գնացքը ու իրենց բոյները վերադարձող թռչուններուն արագ թռիչքը ցոլացուած տեսնելով կ'ստիպուինք. ըսել «Ի՞նչ խաղաղութիւն»: Սակայն ասոնք խաղաղութեան էական նշանակութիւնը պատշաճօրէն ներկայացնող պատկերներ չեն: Մահուան լուծիւնը խաղաղութիւն չէ, ոչ ալ լեռնալճակի մը ջուրին հանդարտ ու կայուն վիճակը խաղաղութիւն կը նշանակէ: Խաղաղութիւնը կեանք ու շարժում ունի: Խաղաղութեան յարմար նշանակ մըն է մեքենայ մը, որուն ամէն մէկ մասը արագօրէն սահելով համերաշխօրէն կը զործէ միւս մասերուն հետ: Նուազախումբի մը երաժշտական գործիքներուն լուծիւնը խաղաղութիւն չի ներկայացներ, այլ իւրաքանչիւր գործիքին կատարեալ ներդաշնակութեամբ միւս գործիքներուն հետ գործածուիլը: Աններդաշնակութիւն չեղած տեղը խաղաղութիւն կը տիրէ: Խաղաղութիւն է երկու զօրութեանց համերաշխ ու քաղցր գործակցութիւնը:

Ուրեմն դարձանք չէ որ Նոր Կտակարանին մէջ «խաղաղութիւն» թարգմանուած բառին արմատը «միացնել» կը նշանակէ: Միացում մը գոյութեան եկած է, որուն արդիւնքը խաղաղութիւն է: Ի՞նչ է այդ միացումը: Մարդուն հոգւոյն Աստուծոյ յարմարցուիլը: Մարդը եւ Աստուած իրարու մէջ անցուելով մէկ եղած են: Այս յարաբերութիւնն է խաղաղութեան ամենէն ներքին վաղտնիքը: Համերաշխ ու ներդաշնակ յարաբերութիւն: Հաճելի ու անվերապահ հաղորդակցութիւն: Երկու կամքերու ազատ ու համարձակ գործակցութիւն: Հոգւոյն՝ Աստուծոյ մէջ ապրիլը, Անոր մէջ շարժիլը ու Անով գոյութիւն ունենալը. ահա այս է խաղաղութիւնը: Այս է «Աստուծոյ խաղաղութիւնը, որ ամէն միտքէ վեր է»: Այս խօսքը տարբեր կերպերով կը մեկնուի, սակայն ինծի կը թուի թէ բոլոր մեկնութիւններն ալ միացնելով միայն կրնանք անոր գերազանց ճոխութիւնը հասկնալ, «Ամէն միտքէ վեր է»: Ըմբռնման ամէն կարողութիւն գերազանցող խաղաղութիւն մըն է: Աներեւակայելի խաղաղութիւն մը: Ինչպէս որ հոտառութենէ զուրկ եղող անհատ մը չի կրնար հասկնալ հոտին ինչ ըլլալը, նոյնպէս ալ խաղաղութեան չի վարժուած մէկը չի կրնար ըմբռնել խաղաղութեան ինչ ըլլալը: Միմիայն փորձառութեամբ կարելի է հասկնալ: Աստուծոյ խաղաղութեան անտեղեակ մէկը չի կրնար նոյն իսկ երազել այսպիսի խաղաղութիւն մը: Անհունօրէն գերազանց է գիտութենէն: Գիտութիւնը լաւ է, իմաստութիւնը լաւագոյն է, սակայն խաղաղութիւնը երկուքն ալ կը գերազանցէ: Խաղաղութիւնը աւելի բարձր ու խորունկ գոհացում կուտայ մարդկային հոգւոյն քան որ եւ է մտային հնարք կամ կարողութիւն: Տէրոջը հետ վստահ յարաբերութեան մէջ գտնուիլը շատ աւելի արդիւնաւոր է քան տագնապիլն ու վախնալը եւ անքուն մնալը: Աստուծոյ խաղաղութիւնը միտքի ամէն գիտութենէ ու ըմբռնումէ գերազանց է:

Ու Աստուծոյ այս խաղաղութիւնը ձեր սիրտերը ու խորհուրդները պիտի պահպանէ: Պաշարման մը պատկերն ունինք հոս: Կեանքը խորամանկ թշնամիներով շրջապատուած է, որոնք պարիսպէն ներս մտնելով անոր զիգած գանձերուն տիրանալու կը ջանան: Խորամանկ թշնամիներ՝ վախեր, վտանգներ, փորձութիւններ զուրկ կ'սպասեն ներս խուփելու, սակայն պարիսպին դրան ներսի կողմը խաղաղութիւնը իբրեւ անքուն պահանորդ կը հսկէ ու կեանքը կ'ապահովէ: Ի՞նչ շնորհալի պատկեր: Մեր խա-

դադուլթիւնը մեր պաշտպանն է: Երբ մեր մէջը խաղաղութիւն ունինք, երբ մեր հոգւոյն ու Տէրոջը միջեւ կատարեալ ներդաշնակութիւն ու համաձայնութիւն կայ, մեր փոքրիկ թագաւորութիւնը իբրեւ մէկ մարմին կուրծք կը պարզէ թշնամւոյն: Աստուծոյ հետ մշակուած միութիւնը անյաղթելի միութիւն մըն է:

Դիտեցէք թէ այս անքուն պահպանութիւնը ուր պիտի կեդրոնացուի: «Ձեր սիրտերը ու միտքերը»: Սրտին մէջ կը ծնին խորհուրդներն ու նպատակները: Սիրտը և խորհուրդները կը ներկայացնեն հոգը և անկէ ծլող ծաղիկները: Երբ Աստուծոյ խաղաղութիւնը կը բնակի կեանքին մէջ, սիրտ ու խորհուրդ լաւ վիճակի մէջ կը գտնուին: Անոնք ամէն թշնամիէ պաշտպանուելու և ամէն ապականիչ ու թունաւոր ախտերէ պահպանուելու են: Երբ խաղաղութիւն ունինք, սրտին հոգը լաւ կը պաշտպանուի ու խորհուրդները անուշաբոյր և չքնաղ ծաղիկներ յառաջ կը բերեն: Երբ սիրտն ու միտքը պահպանուին, մեր բնակարանին հարուած մը չի մօտենար:

Եւ հոս է ապահով պաշտպանութեան գաղտնիքը: Անոնք պիտի պահպանուին «Քրիստոս Յիսուսով»: Առաքեալը յաճախ կը գործածէ այս երկու բառերը: Սիրտը և խորհուրդները պիտի պաշտպանուին Յիսուս Քրիստոսի հետ մտերիմ հաղորդակցութեամբ: Այս հաղորդակցութեամբ հունաւորը Անհունին հետ կը միանայ: Խոնարհաբար Տէրոջը վստահելով կը հասնինք այս միութեան: Հանդարտութեամբ Տէրոջը վստահողը կ'ապահովէ այնպիսի զաշնակից մը, որուն դէմ չարութեան բոլոր խորամանկ ու հզօր բազմութիւնները ի գուր կը պատերազմին: Երբ Աստուծոյ խաղաղութիւնը ունինք, ոչ աշխարհ, ոչ մարմին ու ոչ ալ սատանան կարող են մեզի դիմադրել:



ԱՆԱՌԱԿ ՈՐԴԵՒ ՄԸ ԴԱՐՁԸ

«ՈՍՏՈՍ»

Դժոխային մեծ պատերազմը իր բոլոր աղէտներուն հետ բերած է նաև 1947ին Ուրֆա քաղաքին մէջ, մանուկ մը, որ 15 երկար տարիներ ապստամբած է իր Արարչին դէմ, ոտնակոխ ըրած է Փրկչին քաւարար արիւնը և տրտմե-

ցուցած է Սուրբ Հոգին: Սակայն մարդասէր ու ողորմած Աստուած, կրկին եկած զարկած է այս անհնազանդ որդիին սրտին դուռը, որ վերջապէս սթափելով մեղքի խոր քունէն, ներս ընդունած է անարգած Փրկիչը ու ներում ստացած է Անկէ:

Այս մանկան ծնողքը ճշմարիտ քրիստոնեաներ ըլլալով յաճախ պատմած էին իրեն Սուրբ Գրոց ճշմարտութեանց մասին, այնպէս որ երկրորդ Ծննդեան անհրաժեշտութիւնը զիտէր նա: Սակայն աշխարհային հաճոյքները աւելի նախընտրած էր քան Աստուծոյ անպատմելի սէրն ու ձրի շնորհքները:

Մանկութեան շրջանին բոլորովին սատանային յանձնուած, չար ու անհնազանդ տղոց կեանքը կ'ապրէր, ազգականներուն ու դրացիներուն զգուանք պատճառելով: Մայրեր իրենց զաւակները կ'զգուշացնէին իբր չար օրինակ իրեն նմանելու, ու դեռ թարմ է յիշատակը այն տխուր բառերուն, որ մայր մը իր զաւակին ըսած է, «Ալպէրթ մի' ըլլար զաւակս, եթէ անոր նմանիս, զժոխք կ'երթաս»: Մինչդեռ աւելի վերջը նոյն ծնողքը, հիացմամբ տեսնելով այս չար տղուն զարմանահրաշ փոփոխութիւնը, հետեւեալը խօսած է, «Ինչպէս որ հնարաւոր է Ալպէրթի պէս տղու մը դարձի գալը, իմ զաւակս համար ալ յոյս կայ»:

Քրիստոս մեղաւորներուն համար տառապած ու խաչուած էր, ուստի այս տղեկին ալ կորուստը չէր ուզեր. յաճախ Սուրբ Հոգւոյն միջոցաւ կը խրատէր ու կ'արթնցնէր զինքը. այնպէս օր մը այցելելով շեշտեց թէ երկրորդ Ծննդը անհրաժեշտ է, ապա թէ ոչ, զեհեհի կրակը պիտի ըլլայ իր վարձատրութիւնը: Այս անխուսափելի չարչարանքին վախէն սթափած, երկար օրեր մտաւտանջուեցաւ:

Երկու շաբաթ վերջ, պատերազմը վերջ գտած էր, տղան իր անտարբեր կեանքը վերսկսած էր: Ու այս անառակ որդին քանի կը մեծնար, այնքան աւելի մեղքի մէջ կը սուզուէր, Աստուծոյ ու ծնողացը վիշտը աւելցնելով:

Երբ նա 12 տարեկան եղած էր, օր մը իր ավտոնին մէջ ընկողմանած հոգեւոր թերթիկ մը կը կարդար: Սուրբ Հոգին կրկին մօտենալով ըսաւ, «Եթէ չապաշխարես, Յիսուսի երկրորդ զաւտեան պահուն դուն չպիտի յափշտակուիս ու երկինք չպիտի կրնաս երթալ»: Սբ. Հոգւոյն այս խօսքերը խորապէս ազդեցին իր մանկակոտն սրտին: Շատ մը անքուն գիշերներ անցնելէ յետոյ, Կիրակի օր մը անհանգստութիւնը պատ-

մեց բարեկամի մը, որ ուրախացաւ տեսնելով իր արթնութիւնը ու քաջալերեց զինք որ առաջին առթիւ իր մեղքերը խոստովանելով Աստուծոյ մէջ ներում խնդրէ:

Նոյն օրը ժողովէն վերջ աղօթքի ժամանակ տրուեցաւ, տղեկը անկարող եղած էր ոտքի կանգնիլ, քանզի սատանան ակոթին գամած էր զայն: Թէև այս անգամ պատերազմը աւելի երկար տեւած էր, բայց երկրորդ անգամ մըն ալ Սուրբ Հոգին ընդունելութիւն չէր գտած:

Արդեօք կարելի՞ է երեւակայել այս անհնազանդ որդւոյն վիճակը. Սուրբ Հոգին տրամեցուցած էր երկու անգամ, ոտնակոխ ըրած էր Քրիստոսի քաւչարար արիւնը, ականջները փակած էր մօրը աղօթքներուն, քրիստոնեայ բարեկամներու խրատներուն:

Փառք Տէրոջը համբերութեան, «Վասն զի մեռնողին մեռնիլը չեմ ուզեր կ'ըսէ Աստուած»: Ու վերջապէս ժամը հնչեց անոր համար ալ:

1932ի ամրան գիշեր մը խոր քունէն ընդոստ արթնցաւ պատանին ու խելագարի մը նման սկսաւ շուրջը դիտել. երազ մըն էր տեսած: Պատշգամ ելած էր մօրը հետ ու պայծառ երկնակամարը կը դիտէին, երբ յանկարծ խաւար կը պատէ չորս դին: Պատանին ուշադրութիւնը ուրիշ կողմ դարձուցած մօրը կ'ըսէ, «Մայր, ի՞նչ են այդ ուրուականի նման երեւոյթները»: Պատասխան չստացաւ... ետին կը դառնայ, մայրը չգտներ..., ներս կը վազէ սենեակները կը փնտռէ, բայց մայրը չկայ:

Յայնժամ... կը յիշէ իր մօր հետեւեալ խօսքերը, «Ալպէրթ, տղաս, եթէ չապաշխարես, ես պիտի առնուիմ ու զուն պիտի ձգուի»: Բայց սիրելի գաւակս, քեզ միասին տանելու համար եթէ նոյնիսկ զոհուիլ հարկ ըլլայ, անվարան պատրաստ եմ. Ալպէրթ, Յիսուսի եկուր»:

Այս վերլիշումը կը խելագարեցնէր զինքը, կը մտաբերէր այն բոլոր պատեհութիւնները, զոր ունեցած էր փրկուելու համար: Մօրը աղօթքներն ու խրատները դեռ չէր մոռցած, ինչպէս նաև Սբ. Հոգւոյն աղաչանքն ու շնորհած առիթները: Սակայն հիմա շատ ուշ էր, շնորհքի դարը անցած էր, չարչարանքի ու դատապարտութեան դարը հասած էր:

Պատանին խելակորոյս դետին ինկաւ աղաղակելով, «Մայր, մայր, ինչո՞ւ զիս թողուցիր ու գացիր, մայր, արդեօք չե՞ս խղճար ներկայ վիճակիս, մայր, ինչո՞ւ ստիպելով զիս Յիսուսին չտարիր, մայր իմ, ահա կը կորսուիմ, սատանա-

նէրը կը պատեն չորս դին. մայր, մայր, ազատէ զիս, ազատէ, կը կորսուիմ»: Սակայն ոչ մէկ պատասխան:

Երբ զարնուած պատանին աչքերը կը բանար և կը զգար թէ միայն երազ մըն է, այսուամենայնիւ չէր համարձակած անկողնոյն մէջ շարժիլ...:

Ծագող արշալոյսը մութին հետ վերջապէս փարատեց իր ան ու սարսափը, սակայն երազը սկսաւ մտատանջել: Նոյն առաւօտ որոշեց երթալ իր երկրացի և զինքը շատ սիրող Աստուծոյ մէկ զաւկին պատմել տեսածը. թէև հաստատուն մնաց իր որոշման վրայ, բայց բարեկամը չգտաւ. յաջորդ շաբաթ կրկին գնաց, այս անգամ ալ ուրիշ բարեկամներու հետ կը տեսակցէր ան, այնպէս որ ինք երկրորդ անգամ ըլլալով ճարհատ կը վերադառնար տուն: Սատանան յարմար առիթը գտած էր տղան յուսահատեցնելու: Սակայն պատանին վճռած էր խաղաղութեան հասնիլ:

Վերջապէս առաւօտ մը նոյն բարեկամին հետ տեսնուեցաւ: Մի քանի րոպէ լուռ մնալէ վերջ, երազն ու փրկութեան կարօտութիւնը յայտնեց: Այս ուրախութեան լուրը անհուն բերկրութեամբ համակած էր բարեկամին սիրտը, որովհետեւ այսպիսի անհնազանդ անձ մը վերջապէս կը զղջար: Նոյն իրիկուն իր տունը հրաւիրեց զայն ու քանի մը հատ ալ հոգեւոր թերթիկներ տուաւ, որոնցմէ մէկուն նիւթը «Փրկութեան ճամբան» էր:

Նոյն օրը կէսօրէն վերջ կրկին կ'ուղղուէր բարեկամին խանութը: Ժամը ճին երկու բարեկամներ տուն վերադարձան: Հաւատացեալը Սբ. Գիրքէն համարներ կարդաց, փրկութեան ձրի ըլլալը բացատրեց ու ծնրադրեցին աղօթելու: Ան սրտանց կ'աղօթէր անհաւատին համար որ չյետաձգէ փրկութեան զործը ու անմիջապէս յանձնուի Քրիստոսի: Յետոյ դառնալով պատանին ալ առաջարկեց աղօթել. պատանին իր մեղաւոր ըլլալը խոստովանեցաւ թէև ու ներում խնդրեց, բայց չհաւատաց: Աղօթքէն յետոյ խօսակցութիւնը շարունակուեցաւ ու պահ մը վերջ իրարմէ բաժնուեցան: Մեղաւորը չէր փրկուած: Օրեր ու շաբաթներ իրար յաջորդեցին, պատանին դեռ չէր փրկուած:

Օր մը սեղանին շուրջ, երբ կը խօսակցէր մօրը հետ, «Ո՛ւր պիտի անցնես ապագայ կեանքդ» նիւթին շուրջ, պատանին խիստ շատ զգածուած էր: Մայրը նշմարելով անոր վրդով-

եալ վիճակը, առաջարկեց որ սենեակ մը առանձնանալով աղօթեն: Ու նա մօրը աղօթքէն վերջ ինքզինք Աստուծոյ յանձնեց և խաղաղութիւն գտաւ: Սուրբ Հոգին յաղթած էր:

Անկէ ի վեր Տէրոջը շնորհքով կ'ապրի այն և այս վկայութիւնը կուտայ Տէրոջը փառքին համար: Իր անունն է

ԱԼՊԷՐԹ Ե. ՆՈՐԱՏՈՒՆԿԵԱՆ



Ս. ԳՐԱԿԱՆ
ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ

Քաղեց՝
SCOFFIELDԷՆ

Վ. ՍԱՀԱԿԵԱՆ

ԱՆՕՐԷՆՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Խորհուրդներու սերտողութեան մէջ, մեզի համար շահաւոր է աւելի ընդարձակօրէն սերտել անօրէնութեան խորհուրդը: Այս խորհուրդին համար առաքեալը իր օրերուն մէջ կ'ըսէ թէ անիկա հիմակուելի է կը զօրանայ, Բ. Թեա. Բ 7, որչափ աւելի մեր օրերուն, «վերջին օրերու չար ժամանակներուն» մէջ անիկա աւելի զօրացած է:

Բանբերի անցեալ թիւին մէջ «Անօրէնութեան խորհուրդը» վերնագրով սիւնակի վախճանին ըսած էինք թէ, «Ճշմարիտ վարդապետութիւնը ... ի վերջոյ պիտի խառնուի ապականած և ապականող սուտ վարդապետութեամբ, և այս պիտի ըլլայ պաշտօնապէս, բուն ինքն հաւատուրաց եկեղեցիին ձեռքով»:

Բ. Տիմ. Գ 1-5, վերջին օրերու չար ժամանակներու նկարագրութիւնը հաւատուրաց եկեղեցոյն պատկերն է. վասն զի այսպէս կը վերջանայ, «... որոնք աստուածապաշտութեան կերպարանքը ունին, բայց անոր զօրութիւնը ուրացած են»: Բ. Թեա. Բ 3, «ապստամբութիւն» (յունարէն — ափօսթագիա) բառը կը նշանակէ (ճշմարտութենէն) իյնալ, հեռանալ: Հայերէնի մէջ «ուխտազանց կամ հաւատուրաց» բառերը ամենէն լաւ կրնան արտայայտել այս ճշմարտութիւնը: Մենք հաւատուրաց բառը պիտի գործածենք:

Հաւատուրացութիւնը այն է որ դաւանանքով քրիստոնէականեր գիտակցաբար և կամովին կը

մերժեն Սուրբ Գրոց մէջ յստակօրէն յայտնուած հետեւեալ ճշմարտութիւնները.—

1. Յիսուս Քրիստոսի Աստուածութիւնը և

2. Անոր քաւչական ու փրկարար պատարագութեամբ կատարած փրկագործութիւնը, Ա. Յովհ. Գ 1-3 Փիլ. Գ 18, Բ. Պետ. Բ 1:

Հաւատուրացութիւնը կը տարբերի ճշմարտութեան հանդէպ գործուած սխալէ, վասն զի սխալը կրնայ արդիւնքը ըլլալ տգիտութեան, Գ. Առաք. ԺԺ 1-6 և կամ հերետիկոսութեան, որ տեղի կ'ունենայ, երբ մէկը կրնայ Սատանայի որոգայթին մէջ իյնալ, Բ. Տիմ. Բ 25, 26. այս երկու վերջին պարագաներուն մէջ կրնայ ճշմարիտ հաւատքի բաժին մըն ալ գոյութիւն ունենալ:

Հաւատուրացը նկարագրուած է Բ. Տիմ. Գ 3, 4ի մէջ. (կարգա այս հատուածը): Հաւատուրացները ճշմարիտ հաւատքէն կը մոլորին՝ բայց միեւնոյն ատեն քրիստոնէութեան արտաքին կերպարանքը կը պահեն, Բ. Տիմ. Գ 5, (և երբեմն շատ ալ մոլեռանդ նախանձաւորութիւն կը ցուցնեն): Հաւատուրաց ուսուցիչներ նկարագրուած են հետեւեալ հատուածներուն մէջ.— Բ. Տիմ. Գ 3, Բ. Պետ. Բ 1-19, Յուդա 4, 8, 11-13, 16: Եկեղեցիին մէջ գտնուած հաւատուրացութիւնը, Իսրայէլի մէջ եղածինին նման, Եսայ. Ա 5, 6, Ե 5-7, անբուժելի է, և պիտի պատժուի դատաստանով. Բ. Թեա. Բ 10-12, Բ. Պետ. Բ 17, 21, Յուդա 11-15, Յայտն. Գ 14-16:

Յուդա 11ի մէջ հաւատուրացներու երեք տիպեր ներկայացուած են:

1. Կայէն իր ճամբովը.
2. Բաղաամ իր մոլորութեամբը.
3. Եւ Կորիս իր հակառակութեամբը:

1. Կայէն. — Կայէն օրինակն է կրօնասէր բնական, շնչաւոր մարդուն: Նա Աստուծոյ մը կը հաւատայ և կրօնք մը կը դաւանի, բայց իր գործին եկած կերպով և անձնական կամքին համաձայն: Նա կը մերժէ արիւնով փրկագործութեան անհրաժեշտութիւնը և կը կոթնի անձնական արժանիքի և անձնարգարութեան յենարանի վրայ: Երբ ան իր կրօնի ուսուցիչ ստիպուած ըլլայ քաւութիւնը բացատրել՝ ուզէ չուզէ քաւութիւնը պիտի ուրանայ, հաւատուրաց ուսուցիչ:

2. Բաղաամ. — Բաղաամի մոլորութիւնը պէտք է զանազանել անոր «ճամբայէն», Բ. Պետ. Բ 15, և անոր «վարդապետութենէն», Յայտն. Բ 14:

Բաղաամի մոլորութիւնը այն էր որ բնական, շնչաւոր բարոյականութեան տրամաբանութեամբ, և Իսրայէլի մէջ մեղք տեսնելով՝ կարծեց թէ արդար Աստուած մը պէտք էր զանոնք անիծէր: Ան կոյր էր խաչին բարձրագոյն բարոյականութեան, որու միջոցաւ Աստուած Իր օրէնքին հեղինակութիւնը և անոր անարկու հաստատութիւնները անխախտ կը պահէ եւ զանոնք աւելի կը հաստատէ, «որպէս զի ինք արդար ըլլայ, և արդարացնէ Յիսուսի հաւատքէն եղող (մեղաւորը)», Հոով. Գ 26: Բաղաամի «վարձքը» դրամ եղածին պէս կրնայ ըլլալ նաև ժողովրդականութիւն շահիլ կամ ծափահարուիլ:

3. Կորիւ. — (Տես թուոց ԺԶ). Կորիւի հակառակութեան մեղքը կը կայանար անոր Մովսէսի հեղինակութիւնը իբր Աստուծոյ բերանը, իբր Աստուծոյ ընտրած պատգամաբերը մերժելը, և ինքզինքը քահանայութեան պաշտօնի ստիպելը, առանց վերէն կանչուած ըլլալու:

Ընդհանուր անկումի և հաւատաւորացութեան օրերուն, հաւատացեալին աղբիւրներն են, Բ. Տիմ. Ա 12:

1. Հաւատքը — Բ. Տիմ. Ա 5:

2. Հոգին — Բ. Տիմ. Ա 6, 7:

3. Աստուծոյ խօսքը — Բ. Տիմ. Ա 13, Գ 1-17, Դ 3, 4:

4. Քրիստոսի շնորհքը — Բ. Տիմ. Բ 1:


5. Իր անձը անարգանքի ամաններէն զատել — Բ. Տիմ. Բ 4, 20, 24:

6. Տէրոջը վստահ վարձատրութիւնը — Բ. Տիմ. Դ 7, 8:

7. Տէրոջը հաւատարմութիւնը և զօրութիւնը — Բ. Տիմ. Բ 13, 19:

Արժագանգ յետ մահու

ԵՐԿՈՒ ԱԴԱՄՆԵՐ



(Շարունակութիւն անցեալ թիւէն)

Գալով Բ. Աղամին, ի վերեւ անդ յիշեցինք թէ նախ քան արարչագործութիւն, յաւիտենական դարեր առաջ Աստուածային երրորդութեան մէջ խորհուրդ մը կնքուեցաւ, Հոով. ԺԶ 25, Բ. Տիմ. Ա 10, Տիմ. Ա 2, որոյ միջոցին Աստուածութեան Բ. Անձը Հօր Աստուծոյ խոստում տուած ըլլալով Բան անունը վրան առած էր, Շոմ. Ա 1-3:

Խորհուրդ բառին նշանակութեան համեմատ որ «երկար ժամանակներ ծածկուած էր», Հոով. ԺԶ 25: Երբ Ա. Աղամին չրախտի անհնազանդութիւնը տեղի ունենալով մեղքը և անոր հետեանքը եղող մահը առաջ եկաւ և այսպէս ամէն մարդոց վրայ տարածուեցաւ և մարդիկ սատանայի գերի և անոր հնարքներուն և բազմատեսակ թելադրանքներուն անձնատուր ըլլալով հոգեկորոյս վիճակի ենթարկուեցան, այլ և այլ մեղքերով: Զի կռապաշտութիւնով:

Արարչագործ Աստուած «Բան»ն Աստուծոյ յիշեցուց իր վաղեմի խոստումը, Նա ալ իր խոստմանը տէրը ըլլալը յայտնելով հանդերձ, խնդրեց իր և իր կատարելիք զարմանալի գործի մասին Ս. Հոգւոյն միջոցաւ ապագային ստեղծուելիք մարդկութիւնը տեղեակ պահել:

Ս. Հոգին ալ այդ գործը ստանձնելով մարդիկներէն ոմանց իր և «Բան»ին հոգիէն ներշնչելով ընդ աղօտ իմն գուշակութիւններ ընել տուաւ, որոնց կ'ըսուի Մարգարէ, որ ապագայ յայտնուելու «Բան»ին նկատմամբ «մարգարէացան, մարդոց ըլլալիք շնորհքին համար, ու կը քննէին թէ ե՞րբ կամ ինտո՞ր ատեն կ'իմացնէր իրենց մէջը եղած Քրիստոսի Հոգին, որ առաջ կը վկայէր Քրիստոսի չարչարուիլը, ու անկէ ետեւ փառաւորուիլը», Ա. Պետ. Ա 10-12:

Այսպէս արարչագործութենէն շատ դարեր վերջ Հայրը կրկին յիշեցուց «Բան»ին իր խոստումը, Նա ալ անմիջապէս հնազանդելով Հօրը պատուէրին, Իր Աստուածային փառքէն ունայնացաւ», Փիլ. Բ 7:

Եւ ահա, օր մը դաշտի մը մէջ հրեշտակներու բազմութիւն մը հոգեգմայլ երգ մը կ'երգեն, «Փա՛ռք ի բարձունս Աստուծոյ և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն», Ղուկ. Բ 14, աւետելով Յիսուս մանկան Ս. Ծնունդը և առաջին յայտնութիւնը:

«Եւ մանուկը կ'աճի կը զօրանայ» և վերջապէս երեսուն տարեկանին հասնելով կ'որոշէ և կ'սկսի Իր ստանձնած պաշտօնը ի կիրարկանել — «Երկնից թագաւորութիւնը քարոզել»: Շատեր կ'ընդունին և դարձի գալով կը փրկուին, իսկ շատեր ալ «իժերու ծնունդ և մեղաւոր ըլլալով հանդերձ, իրենք զիրենք Աստուծոյ որդի եղած կը յայտարարեն ըսելով «Մենք մէկ Հայր մը ունինք, որ է Աստուած», Յով. Ը 41: Բայց բուն Աստուծոյ Որդւոյն Ինքզինքը Աստուծոյ Որդի անուանելուն կամ Ինքզինք Աստուած կոչելուն և կամ զԱստուած Իր Հայրը անուանելուն, նոյնպէս իրեն համար Քրիստոսը՝ Որդին Աստուծոյ

ըսելուն կուրորէն կը կատարին ու հանդերձին անգամ կը պատուեն», Մտթ. ԻՉ 63-65, Յով. Ե 18. Եւլն. Եւլն:

Վերջապէս առանց նայելու Անոր կատարած անթիւ հրաշագործութիւններուն և բժշկութիւններուն, բոլորովին «նախանձէ շարժեալ», Մտթ. ԻԵ 17, վախկոտ Պիղատոսէն վճիռ մը ձեռք կը ձգեն ի խաչ հանելու և խաչը կը հանեն զԱյն երկու անօրէններու մէջտեղը, Մարկ. ԺԵ 27-28, մեծ տօնի մը Ուրբաթ օրը. և ժամը 6-9 ամբողջ երկրի վրայ խաւար եղաւ, Մտթ. ԻԷ 45, Ա. Աղա-մին դրախտէն վոնտուած ատենուան մուծը յիշեցնող:

Սոյն մթութեան մէջ, վերջին պահուն «Ամե-նայն ինչ կատարեալ է, և Հայր, ի ձեռս քո աւանդեմ զհոգի իմ», ըսելով հոգի կուտայ, որմէ յետոյ արդար մարդու մը միջոցաւ խաչէն վար առնուելով իր նոր գերեզմանին մէջ կը դրուի, և վրան կափարիչ մը դրուելով Պիղատոսին կնիքովն ալ գերեզմանը կը կնքուի առ ի զդու-շութիւն, զի Սա Իր կենդանութեան Իր սպաննուիլը նախաձայնելով երեք օրէն ետեւ յարութիւն առնելը կրկին կրկին յիշած էր:

Բայց Անիկա երրորդ օրը ճիշդ իր ըսածին պէս յարութիւն առնելով հրեշտակէն զատ Ինքն ալ առաջին անգամ կիներուն երեւնալով անոնց միջոցաւ լուր դրկեց աշակերտներուն, որ իրեն ժամադրաւայրը Գալիլեայի լեռը երթան, զԻնք հոն տեսնել և մխիթարուելու համար, քանզի Ինք անոնցմէ առաջ հոն պիտի երթար և գնաց:

Հոն Յիսուս ըսաւ անոնց, չէ՞ք յիշեր որ ձեզի ըսի թէ՝ ճշմարտութեան հոգին պիտի դրկեմ... և ան օրը պիտի գիտնաք թէ Ես Հօրս մէջն եմ և դուք Իմ մէջս, Ես ալ ձեր մէջը, Յով. ԺԴ 17-20:

Ամէնը միաբերան ըսին Յիսուսի, «Տէր կ'ա-ղաչենք, շուտով դրկէ Ս. Հոգին»:

Անիկա ալ դուք ամէնքդ միաբանութեամբ և սրտանց աղօթք ընելով ձեր սրտերը Աստուծոյ յանձնեցէք և սպասեցէք ըսաւ: Ապա երկու ձեռքերը անոնց վրայ տարածելով օրհնեց զա-նոնք և երկինք համբարձաւ և Հօր Աստուծոյ աջ կողմը նստաւ, Մարկ. ԺԶ 19, Դործ. Ա 2-9:

Եւ տասը օր յետոյ, ըստ իւր խոստման Ս. Հոգին դրկեց, երբ աշակերտները, Յիսուսի մայրը և ուրիշ շատեր ընդամէնը հարիւր քսան հոգի, Պէնտէկոստէին օրը միաբանութեամբ վերնա-տան մէջ կ'աղօթէին:

Յանկարծ երկինքէն ձայն մը եղաւ սաստկա-

շունչ հովի մը ձայնին պէս և բոլոր տունը լեցուց, ուր որ նստեր էին: Եւ բաժանուած լեզու-ներ երեւցան իրենց, որպէս թէ կրակէ, ու ամէն մէկուն վրայ նստաւ: Եւ ամէնքն ալ Հոգւով Սրբով լեցուեցան ու սկսան ուրիշ լեզուներով խօսիլ, ինտոր որ Հոգին իրենց խօսիլ կուտար:

Եւ Պետրոս ելաւ տանը մէկին հետ մէկտեղ ձայնը վերցուց հիանալի ճառ մը խօսեցաւ: Խիստ ազդու կերպով և փաստերով հաստատեց Յիսու-սի՝ խոստացուած Մեսիան ըլլալը և անօրէննե-րու ձեռքով սպաննած ըլլալին, որմէ մեծ բազ-մութիւն աս որ լսեցին, սրտերնին կսկծաց եւ ըսին Պետրոսին, մարդի՛կ եղբայրներ, ի՞նչ ընենք, և Պետրոս ըսաւ անոնց, ապաշխարեցէ՛ք ու ձեզմէ ամէն մէկը թող մկրտուի Յիսուս Քրիստոսի անունովը մեղաց թողութեան համար և Հոգւոյն Սրբոյ պարգեւը պիտի ընդունիք...: Եւ անոնք որ սրտանց ընդունեցին անոր խօս-քերը, մկրտուեցան, ու այն օրը երեք հազար հոգիի Հափ աւելցան, Դործ. Բ 4-42:

Իսկոյն Պետրոսի և աշակերտներուն և ուրիշ-ներուն միտքերնին եկաւ, Յով. ԺԴ 20, և հաս-կցան թէ այլեւս իրենք ալ «Յիսուսի մէջ են և Յիսուս իրենց մէջ»:

Ահա այսպէս Ա. Աղամին անհնազանդութեան հետեւանօք առաջ եկած և մարդոց վրայ տա-րածուած մեղքը մեր Տէրը Քրիստոս իր հնազան-դութիւնովը ջնջեց և «Ան՝ խաչին մահուամբ», և սրբեց և «մեզ Աստուծոյ որդիներ ըրաւ», Յով. Ա. 12: Որ իր բազմաթիւ անուններուն հետ գլխաւոր առաքելոյն Պօղոսի կողմէ երկու ան-գամ իրաւամբ կոչուեցաւ նաեւ Բ. Աղամ եւ Բ. մարդ, ըստ վերնագրիս: Օրհնեալ ըլլայ մեր Տէրը «Իր առատ սիրոյն համար, որով մեզ սի-րեց» յաւիտենական սիրով, Եփես. Բ 4:

Չմոռնանք յիշել, որ ո և է մէկը իր Աստուծոյ որդի եղած ըլլալուն սրբուած պատկերը միայն այն ատեն կրնայ տեսնել, երբ թովմասի պէս ճշմարիտ և իրական հաւատքով «Իմ Տէրս եւ իմ Աստուածս»... ըսելով Յիսուսի կը նայի, մեր հաւատքին առաջնորդին եւ կատարողին, Երբ. ԺԲ 2: Որով միայն թէ Բ. Աղամը — Յիսուսը կը տեսնէ եւ թէ ինքզինքը յստակ եւ պայծառ, որպէս Անոր եղբայրը, ընդունելով Անոր խաղա-ղութիւնը իր մէջ... Յով. ԺԴ 27, որ ամէն միտքէ վեր է, Փիլ. Դ 7:

Արդ՝ ստորագրեալս վտխառն տարի Ա. Աղա-մին պատկերէն ընդօրինակուած ուՌԻ մը շերտ էի, թէեւ դժգոհ եւ կ'ուզէի որ այդ այլանդակ

պատկերէն եւ մեղսալից կեանքէն ազատիմ, բայց ձեռքս չէր, «Ինչ որ չէի ուզեր, ան կ'ընէի»... Հոռով. է 13, 19:

Օրհնեալ ըլլայ Աստուծոյ Ս. անունը, որ ասկից ութ տարի առաջ՝ «Ձեռքէս քաշելով զիս իր Որդւոյն Յիսուսի տուաւ», Յով. է 44: Երբ ես գիշերուան խոր լռութեան մէջ աչքերէս արտասուքը գետին թափելով կ'ազօթէի, մինչեւ որ հոգեկան խաղաղութիւնով կարողացայ երգել անուշ եղանակով մը հետեւեալ «Գիշերուան երգս», Յոր. Լէ 10, Սաղմ. 108 8:

Գ — ըթոյ ալն և աղբիւրդ սիրոյ անհուն,
Ընդունէ զիս Տէ՛ր, գիշերուանս պահուն,
Որ գամ աթոռոյդ առջեւ ծնրաչոք,
Կոտրած սրտով և արցունքոտ աչօք:

է — ի մերթ արթուն և մերթ 'ի խոր քուն:
Լի պիղծ մեղքերով յայտնի և թագուն,
Այժմ անհուն սիրոյդ եղած առարկայ,
Երգովս կուգամ քեզ, Տէ՛ր իմ և Արքայ:

Ո — բով կը խառնեմ իմ օրհներգս չնչին,
Մթին մէջ փայլող աստեղց մրմունջին,
Տո՛ւր որ Տէ՛ր, ես ալ փայլիմ մարդոց մէջ,
Որպէս աստղ երկնից և գերթ ճրագ անշէջ:

Բ — ապպունիդ Յիսուս, գիշերուանս երգով,
Խնդրեմ որ լինիս և Դու միշտ իմ քով,
Եւ զօրացուր այժմ զիմ տկար հոգին,
Ապրիլ համաձայն կեանք մը Քոյ կամքին:

Գ — իշերուանս այս խոր մթին մէջ՝ երգիս,
Լուր, ո՛վ Սուրբ Հոգի, զօրացուր հոգիս,
Հաղորդ ըրէ զիս սրբութեանդ անճառ,
Որ Երբորդութեանդ լինիմ Սուրբ տաճար:

Այժմ ներկայիս միակ բաղձանքս է ազօթքով, որ սիրելի ընթերցողներս ուշադրութեամբ կարդալով այս տողերը, եթէ Բ. Աղամին — Քրիստոսի մէջ ընդօրինակուած կամ հաստատուած շերտ մը եղած են, բոլոր ուժով աշխատին Ա. Աղամի թոռներէն ուրիշներ եւս առաջնորդել առ Բ. Աղամ, Սուրբ Հոգւոյն միջոցաւ, «որպէս իմաստուն և շատերը արդարութեան առաջնորդող անձնաւորութիւններ», Դան. ԺԲ 3, Յակ. Ե 20:

Իսկ ամէն անոնք որ տակաւին Ա. Աղամին կեղտոտ և մեղսալից պատկերին մէջն են, անմիջապէս ազօթքով Յիսուսի գիրկը նետուին, հաւատալով որ «Նա գրկաբաց պատրաստ է զիրենք ընդունելու իր մէջ», Մատ. ԺԱ 28: Որով միայն «կեանք կ'ունենան և ալ աւելի», Յով. Ժ 10:

Գ. ԶԱՔԱՐԵԱՆ (Թողատցի)

Հիւանդանոց

Մարտի 7 Սեպտ. 1935

ՃԵՅՄՍ

ՀԸՏՈՐՆ ՃԱՄԲՈՒՆ ՓՈԽՈՒԻԼԸ ԹԻՅԼԸ

1850ին Հըտսըն տակաւին իր հօրը դեղարանին մէջ կը գործէր: Ապագան յուսալից էր թէպէտեւ իրեն համար, սակայն տարբեր ասպարէզ մը գրաւած էր իր ամբողջ ուշադրութիւնը: Զինաստան երթալու կոչին մասին օր եւ է տարակոյս չունէր: Բայց ի՞նչպէս պիտի կրնար այդ նպատակին համար նախապատրաստուիլ ու ի՞նչպէս պիտի կարենար այդ նպատակին հասնիլ: Փոքրիկ քաղաքի մը մէջ բնակող պատանի մը ի՞նչ կրնար ընել Զինաստանի համար: Զինաստան, Արեւելքի այն մեծ կայսրութիւնը, այնքան ընդարձակ ու բազմամարդ, դարերով շրջապատուած անմատչելի պարիսպով մը, հպարտ իր թագուն առանձնութեան վրայ՝ չթուլատրելով օտարներու որ ակնարկ մ'իսկ նետեն իրենց վրայ, բայց և այնպէս ցաւալիօրէն կարօտ Աւետարանին: Ի՞նչպէս կրնար Պարսկիցի անընշան պատանի մը իր միտքէն իսկ անցնել այդպիսի հեռաւոր անկիւնի մը մէջ թագաւորաց թագաւորին դեսպանութեան պաշտօնը վարելու առանձնաշնորհումը ունենալ: Սակայն Աստուածային պատուէրը որոշապէս և վերջնականօրէն կ'ըսէր, «Ուրեմն Ինծի համար Զինաստան գնա»: Ուստի Հըտսըն սկսաւ երկայն ու ջերմեռանդ ազօթքներով Աստուծոյ առաջնորդութիւնը խնդրել:

Դիմեց նաեւ իր կիրակնօրեայ դպրոցին Տեսուչին, Պրն. Ուիթուրթին, և յուսադրուեցաւ անոր խորհրդակցութենէն: Իր այս հին բարեկամը, Բրիտանական Սուրբ Դիրքի Ընկերութեան հետ կապ ունենալով իրեն նուիրեց Ղուկասի Աւետարանին չինարէն մէկ թարգմանութիւնը: Իմանալով թէ Պարսկի ժողովական եկեղեցիին երէցը Զինաստանի մասին գրուած հատոր մը ունէր, անոր այցելութեան երթալով խնդրեց որ այդ հատորը իրեն փոխ տար կարդալու և կրկին վերադարձնելու:

«Ինչո՞ւ կ'ուզես այս գիրքը կարդալ» հարցուց երէցը:

«Աստուած զիս միսիոնարական գործի կանչած է այդ երկրին մէջ» պատասխանեց Հըտսըն:

«Ինչպէս կը մտադրես երթալ» հարցուց երէցը:

«Երբեք զաղափար մը չունիմ այդ մասին. թերեւս Քրիստոսի 12 և 72 աշակերտներուն նման՝ զիս զրկողին ապաւինելով երթալու եմ, վստահ ըլլալով թէ Ան պիտի հոգայ իմ բոլոր պէտքերս», պատասխանեց Հըտսըն լրջութեամբ:

Ասոր վրայ՝ երէցը իր ձեռքը անոր ուսին դնելով ըսաւ՝ «Երբոր քիչ մըն ալ մեծնաս, աւելի իմաստուն պիտի ըլլաս, տղաս: Այդ տեսակ խորհուրդ մը շատ աղէկ էր Քրիստոսի օրով, սակայն ներկայ դարուս չգործադրուիր»:

Հըտսըն՝ իր ծնողաց խրատին հետեւելով ջանաց իր մարմինը, միտքը ու հոգին զարգացնելու աղբիւրներ գործածել: Սկսաւ աւելի հետեւել բացօթեայ մարզանքներու: Փետուրով լեցուած իր կակուղ վերմակը մէկդի դրաւ, ինչպէս նաեւ կարգ մը ուրիշ հանգստութիւններ որպէսզի ինքզինքը աւելի չարքաշ կեանքի մը վարժեցնէ: Թերթիկներ ցրուելու գործը շարունակեց, կիրակնօրեայ դպրոցի կարգի մը ուսուցչութիւնը ստանձնեց, հիւանդներու և աղքատներու այցելութիւններ կատարելու ետեւէ եղաւ ու ինչ տեսակ քրիստոնէական գործի որ հետեւելու պատենութիւնը ներկայացաւ, ջանաց կատարել: Համոզուած էր թէ օտար երկիրներու մէջ հոգիներ շահելու կարող ըլլալու համար՝ նախ իր հայրենիքին մէջ հոգիներ շահող մ'ըլլալու էր:

Հըտսըն սկսաւ նաեւ չինարէն սորվիլ իր բարեկամին նուիրած Ղուկասի Աւետարանը իբրեւ դասագիրք գործածելով: Լսած էր Մր. Մալլնի ըսածը չինարէնի մասին: Մր. Մալլն Բապըրթ Մարիսընի հետ գործած էր Չինաստանի մէջ 1813ին ու անոր զաղափարն էր թէ չինարէն սորվելու համար մարդ ունենալու էր՝ «երկաթէ մարմին, պղինձէ թոքեր, կաղնիէ գլուխ, պողպատեայ գսպանակներով պատրաստուած ձեռքեր, արծիւի աչքեր, Առաքեալի սիրտ, հրեշտակներու յիշողութիւն և Մաթուսաղայի կեանքը»: Սակայն Մր. Մալլնի այս արտայայտութիւնը արգելք չեղաւ երիտասարդ Թէյլըրի եռանդին: Անիկա քանի մը շաբթուան ընթացքին հարիւրաւոր չինարէն խօսքերու նշանակութիւնը սորվեցաւ, թէպէտեւ տակաւին չէր գիտեր թէ ինչպէս հնչելու էր զանոնք:

Այս պարագաներուն Տօքթ. Կուցլաֆ Հոնքոնկէ Լոնտոն վերադառնալով՝ սկսաւ ժողովուրդին միտքը բանալ ու հոգեցնել թէ Չինաստանի մէջ միսիոնարական գործ տեսնելու կարելիութիւն

թիւններ կային: Լոնտոնի մէջ սկսաւ հրատարակուիլ «Հասկաքաղը» կոչուած պարբերական մը, որուն մէջ կը տպուէին Տօքթ. Կուցլաֆի աշխատակիցներէն եկած ընթացիկ լուրերը՝ ինչպէս ուրիշ երկիրներու մէջ կատարուած միսիոնարական գործերու նկատմամբ տեղեկութիւններ: Հըտսըն այնքան հետաքրքրուեցաւ այս պարագայով որ համարձակութիւն առաւ Չինական Աւետարանչական Ընկերութեան ատենապետին, Մր. Փերսի դիմել և անկէ Չինաստանի մասին տպուած շրջաբերականներ ու թերթիկներ խնդրել որով կարենար իր բարեկամներուն տեղեկացնել Չինաստանի միսիոնարական գործին մասին ու քանի մը ոսկի հաւաքել միսիոնարութեան համար:

Արդ, տարիէ մը աւելի էր որ Հըտսըն Տէրովմէն իր հրաւերը ստացած էր ու կ'զգար թէ այլեւս ժամանակը հասած էր իր կեանքի գործին համար աւելի որոշ պատրաստութիւններ տեսնելու: Հօրը դեղարանին մէջ ունեցած հինգ տարիներու փորձառութեամբ հմտութիւն ստացած էր ղեզերու մասին ու սովորական տկարութեանց համար ղեղապիրներ իսկ կը պատրաստէր: Քանի որ նախանձաւոր էր իր ձեռքերով իր անձնական ապրուստը շահելու, խորհեցաւ թէ փորձառու բժիշկի մը օգնական ըլլալով կրնար թէ՛ իր ապրուստը շահիլ և թէ՛ իր բժշկութեան ուսման մէջ յառաջդիմել: Շատ ազօթքով Աստուծոյ առաջնորդութեան դիմելէ վերջ՝ Հըլլ քաղաքին մէջ գործ մը բացուեցաւ իրեն: Քաղաքին ամենէն շատ զբաղած բժիշկներէն մին օգնականի մը պէտք ունէր: Հըտսըն իր ծննդեան ճիշդ 19րդ տարեդարձին սկսաւ իբրեւ օգնական գործել Տօքթ. Հարտիի հետ՝ որ Հըլլի մէջ մեծ յարգանք կը վայելէր ոչ թէ միայն իբրեւ լաւ բժիշկ մը այլ նաեւ իբրեւ ճշմարիտ քրիստոնէայ մը: Սակայն Հըտսըն հասկցաւ թէ Տօքթ. Հարտիի փառաւոր ու հանգստաւէտ տան մէջ բնակելով պիտի չկրնար միսիոնարութեան համար նախապատրաստուիլ: Այն կեանքը որ իրեն պէտք էր ու որուն ինք անդիտակցօրէն կ'առաջնորդուէր, կրնար նմանցընել Մովսէսի անապատին մէջ անցուցած կեանքին, Յովսէփի Փարաւոնի բանտին մէջ անցուցած տարիներուն ու Պօղոսի Արաբիոյ անապատին առանձնութեան մէջ անցուցած կեանքին: Հըլլ քաղաքին տարբեր մէկ մասին մէջ փոքրիկ սենեակ մը կը գտնուէր որ կրնար «Մարդարէին սենեակին» նմանցուիլ՝ խեղճ կերպով կահաւորուած ու ամէն ընկերակցութիւն

հեռի խցիկ մը, ուր կրնար աւելի չարքաշ կեանք մը ապրիլ ու Աստուծոյ հետ սերտ հաղորդակցութիւն մշակել: Սակայն տարբերութիւնը խիստ զգալի պիտի ըլլար եթէ Տօքթ. Հարտիի փառաւոր տունէն անմիջապէս այս խեղճուկ սենեակը փոխադրուէր, որ յետոյ իր բնակարանը պիտի ըլլար Հըլլի մէջ: Ուրեմն Տէրը այնպէս կարգադրեց որ երբ բժիշկին տանը մէջի իր սենեակը անոր ընտանիքին անդամներէն մէկին պէտք եղաւ, իր մօրաքոյրը ամենայն սիրով զինք իր տան մէջ ընդունեց: Հըտսըն ըստ երեւոյթի շատ երջանիկ էր իր մօրաքոյրը բնակարանին մէջ: Սակայն անօթի էր Աստուծոյ խօսքին: Այս պարագային էր որ հանդիպեցաւ քրիստոնեաներու խմբակի մը: Իրեն պէտք եղածն ալ ճիշդ այդպիսի ընկերակցութիւն մըն էր: Հըտսըն իր երեւակայածէն աւելի դժուարին միսիոնարական ասպարէզ մը պիտի ունենար և իր այս նոր գտած բարեկամները թէ ժամանակաւոր և թէ յաւիտեական խնդիրներու նկատմամբ այնպիսի օրինակելի հաւատք մը ունէին որ մինչեւ ցարդ անծանօթ էր Հըտսընի:

Իրեն ուշադրութիւնը դրաւեց նաեւ Ճորճ Միլլըրի գործը Պրիսթլիի մէջ: Ճորճ Միլլըր արդէն հարիւրաւոր որբեր կը խնամէր, սակայն Տէրը կ'սպասէր որ 1000 որբ հոգալու միջոցները տար իրեն: Հաւատքի այս մարդը ոչ թէ միայն որբեր կը խնամէր, ալ նաեւ շատ մը միսիոնարներու կ'օգնէր ու Սուրբ Գիրքի հատորներ կը զրկէր հեթանոս և կաթոլիկ երկիրներ: Հըտսըն անձնապէս շփման եկաւ բէննի մը իսկ չունեցող Միլլըրի հետ, որուն կեանքը հրաշալի վկայութիւն մըն էր ազդեցիկ ու ջերմեռանդ աղօթքի զօրութեան, քանզի անիկա առ Աստուած ունեցած իր հզօր հաւատքովը միայն կը դարձնէր իր ամբողջ գործը: Դրամական օգնութեան համար որ եւ է մէկին չէր դիմեր. ոչ ալ ապահովուած եկամուտ մը ունէր: Ասկէ աւելի քաջալերական պարագայ մը կարելի չէր երիտասարդ Հըտսընի բռնելիք շաւղին համար:

Այս ատենները Հըտսըն քանի մը օր Լոնտոնի մէջ անցնելու պատեհութենէ մը օգտուելու նպատակաւ հոն գնաց: Կը յուսար քիչ մը քաջալերութիւն ստանալ Լօպլայտ անունով Գերմանացի միսիոնարէ մը որ Չինաստանէն նոր վերադարձած էր: Այս ճամբորդութեամբ պատեհութիւն պիտի ունենար նաեւ քարտուղար Մր. Փիլսի հետ տեսակցելու, որուն հետ թըղթակցութիւն ըրած էր: Սակայն քարտուղար Փիլս այնքան զբաղած էր սակարանի հաշիւներով որ

որով որ չկրցաւ շատ ուշադրութիւն ընծայել Հըտսընի, երբ ան իր գրասենեակը գնաց, բայց չկրցաւ չհետաքրքրուիլ իր Պարնսլիցի երիտասարդ թղթակիցով որուն փայլուն ու լուրջ դէմքը կ'արտայայտէր իր մէջ բնակող հոգին: Ուստի կարգադրութիւն ըրաւ կիրակի օրը զայն ժողովի մը տանելու՝ ուր հանդիպեցաւ շատ մը անհատներու որոնց անուններուն ծանօթացած էր «Հասկաքաղի» միջոցով:

Ժողովին ներկայ էր նաեւ Մր. Լօպլայտ որ ընդարձակ ու հետաքրքրական տեղեկութիւններ տուաւ իր դաշտին մասին: Հըտսըն անհամար հարցումներ ունէր ընելիք: Կ'երեւի թէ այս ծեր միսիոնարին տպաւորութիւնը Հըտսընի մասին շատ նպաստաւոր չէր, որովհետեւ անիկա երիտասարդ Հըտսընի շէկ մագերը ու բաց կապոյտ աչքերը նշմարելով՝ բացազանչեց, «դուն երբէք յարմար չես Չինաստանի: Չինաստանցիք զիս «կարմիր մագով սատանան» կը կոչեն, երբ քեզ տեսնեն, սարսափով պիտի փախչին քեզմէ, բնաւ մտիկ պիտի չընեն քեզի»:

Հըտսըն հանդարտօրէն պատասխանեց, «Սակայն Աստուած զիս կ'անչեց ու Անիկա գիտէ իմ մագիս ու աչքերուս գոյնը:

(Շալունակելի)

Թարգմ. Ն. Մ.



ՇՈՂԵՐ ԵՒ ՇԱՂԵՐ ԿԵՆ ԱՅ ԱԾՈՒՆԵՐԷՆ

ԱԻՆՏԱՐԱՆ ԱՆԱՍՏՈՒԱԾՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ



Վերնագիրս մօտաւորապէս երկու հարիւր տարի առաջ Հոգիով լեցուն Պատ. Փօրաթմանի խօսած մէկ քարոզին նիւթն էր: Այս քարոզը տպուելով ցրուեցաւ, և ամէն կողմ մեծ ընդունելութիւն գտաւ: Նոյնիսկ Հոլանտա ալ հասնելով՝ հոն Աստուծոյ զարմանալի կարգադրութեամբ անառակ որդիի մը փրկութեան միջոց եղաւ հետեւեալ կերպով:

Իր կեանքը մեղքով անցուցած զերման երիտասարդ մը, իր հօրը տունէն փախչելով Հոլանտա եկաւ, անկէ նաւով Հնդկաստան երթալու

նպատակաւ: Մինչ նաւահանգիստը նաւուն ճամբայ ելլելուն կ'սպասէր, հոն զրազանառատուն մը մտաւ զրքեր առնելու որպէս ճամբու կարգալու պաշար: «Աւետարան անաստուածներու համար» վերնագիրը իր աչքին զարկաւ ու ծաղրական ոճով մը «Անաստուածներուն մէկն ալ ես եմ, ուրեմն ասիկա ինծի համար է» ըսելով հատ մը գնեց ու սկսաւ կարդալ և մինչ կը կարդար Աստուած անոր խօսեցաւ: Նա իր անկումին խորունկութիւնը տեսնելով սոսկաց ու զղջալով Աստուծոյ ողորմութիւնը փնտոեց և Աստուծոյ Որդւոյն հաւատալով Հնդկաստանը մոռցաւ, Նոր Փրկիչն ընդունեց:

Կեանք մը ապրելու հաստատ որոշումով իրեններուն վերադարձաւ ու կեանքին մնացած բոլոր ժամանակը անկեղծօրէն Տէրոջը ծառայեց:

ԴԱՂԻՃԻՆ ՄԵՋ, ՈՉ ԹԷ ԽՈՂԱՆՈՅԸ

Երիտասարդ մը իր հոգիին փրկութեանը համար քիչ շատ հետաքրքիր եղած էր. կէսօրէ վերջ մը իր զրասնեակին մէջ ըսաւ, «Յիսուս Քրիստոսը իբր իմ Տէրս ու Փրկիչս՝ պիտի ընդունիմ»: Տուն գնաց և իր կնոջ, որ կրօնքի անուանական դաւանող մըն էր, պատմեց թէ իր որոշումը տուած է որ Քրիստոսի պիտի ծառայէ և աւելցնելով ըսաւ, «Այս իրիկուն ընթրիքէն յետոյ ամէնը դահլիճը պիտի տանիմ ու հոն ընտանեկան սեղանը պիտի կանգնեմ»:

Անոր կինը ըսաւ, «Լաւ, բայց գիտես որ այն պարոնները, որ թէյի պիտի գան, ոմանք անաստուած են ու քեզմէ աւելի տարեց են, չէ՞ս խորհիր թէ աւելի լաւ պիտի լլլայ եթէ սպասես մինչեւ որ անոնք երթան, կամ եթէ անպայման հիմա կ'ուզես ընել, խոհանոցը գնա ու քու առաջին աղօթքդ սպասաւորներուն հետ ըրէ»:

Երիտասարդը քանի մը բռպէ մտածելէ ետք ըսաւ «Ես Յիսուս Քրիստոսը առաջին անգամ ըլլալով իմ տունս հրաւիրած եմ և զԱնիկա ամենէն լաւ սենեակին մէջ պիտի ընդունիմ և ոչ թէ խոհանոցը»: Այսպէս նա իր բարեկամները դահլիճը կանչեց և հակառակ ծաղրի նա կարդաց, վկայեց և աղօթեց: Այս մարդը վերջը Միացեալ Նահանգներու դատարանին զխաւոր դատաւորն եղաւ:

Չամչնանք Քրիստոսի Աւետարանէն, որ փրկութեան համար Աստուծոյ զօրութիւնն է:

ԵՐԲ ԶԵՌԴԻ ԿԸ ԽՆԴՐՈՒԻ



Երիտասարդ մը որ հարուստ էր, սակայն իրեն նշանաբանը «Ես ու իմ տունս» Եհովան պիտի պաշտենք» էր, աղջկան մը ձեռքը խնդրեց: Այս աղջկան քոյրը քիչ ժամանակ առաջ հիւանդացած, այդ հիւանդութեան մէջ դարձի եկած և մեռած էր: Նա իր քրոջմէն խօսք առաւ որ ան ալ իր դարձը մահուան անկողնին չը յետաձգէ: Գիշեր էր, հետեւեալ առտուն աղջիկը իր ձեռքը խնդրող երիտասարդին այո՛ պատասխանը պիտի տար: Գիշերուան երագին մէջ տեսաւ քոյրը, որ իր առջեւ կեցաւ ու մէծ լըջութեամբ ըսաւ. «Դուն քու խոստումդ մոռցա՞ր, կը կա՞րձես որ այս ամուսնութիւնը քու երջանկութիւնդ պիտի ըլլայ: Բայց ես քեզի կ'ըսեմ որ դուն այս կերպով քու յաւիտեանական փրկութիւնդ կրնաս կորսնցնել: Լաւ խորհէ, «Քանզի ի՞նչ կը շահի մարդ մը եթէ բոլոր աշխարհը վաստկի, և իր անձը կորսնցնէ կամ մնասէ»: Երբ արթնցաւ, ա՛լ իր մէջ մերժելու որոշումը հաստատուած էր: Տէրոջը սիրոյն համար պէտք էր որ նա հրաժարէր այս անձին հետ ամուսնանալէ, և ո՛չ մէկ ատեն ասոր համար չզղջաց: Ժամանակէ մը վերջ Տէրը անոր յարմար, քրիստոնեայ ընկեր մը տուաւ որու հետ երջանիկ տուն մը կազմեցին:

Երբ քու ձեռքդ կը խնդրուի և կամ դուն մէկու մը ձեռքը պիտի խնդրես, լաւ խորհէ, աղօթքով խորհէ, չըլլայ որ քու անձդ կորսնցնես և կամ անոր մնասես: Հաւաքեց՝ Ժ. Կ. Դ.

ՊԱՏՄԱԿԱՆ

ՄԵԾ ԴԵՄԲԵՐ ՈՒ ԴԵՊԲԵՐ
ՀԱՅՈՑ ՀԱՒԱՏՈՑ ԸՆՏԱՆԻՔԷՆ

ՄԵԾՆ ՆԵՐՍԷՍ ՊԱՐԹԵՒ (353-373)

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՆՅՈՒԴԱՐՁԸ. — Ներսէս իր պաշտօնավարութեան սկիզբը 6 տարի խաղաղ գործունէութեան շրջան մը ունեցաւ, և այդ տարիներու ընթացքին էր որ բարեկարգեց Հայաստանի եկեղեցական ու ընկերական կեանքը ու երկիրը լեցուց բարեգործական հաստատութիւններով, ինչպէս տեսանք նախորդ յօդուածներուն մէջ (տե՛ս Բանբեր 1938, էջ 141, 155, 183):

Դժբախտաբար այդ ժամանակաշրջանը շատ

կարճատեւ եղաւ: Դարձեալ փոթորկեցաւ մեր սիրելի հայրենիքը: Շուտով ծայր տուին ներքին երկպառակութիւնները և արտաքին յարձակումները: Ասոր մէջ թէեւ շատ յանցանք ունին նաեւ հայ նախարարները, որոնցմէ ոմանք իրենց տոհմային փոքր հաշիւները գերադասելով հայրենիքի շահերուն՝ գործիք կ'ըլլային օտարներու ձեռքին մէջ ընդդէմ թաղաւորին, — բայց պատասխանատուութեան մեծ բաժին մըն ալ կը ծանրանայ Արշակ Բ. թագաւորին (354—368) վրայ: Թէեւ քաջ, խրոխտ, պատուախնդիր և հայրենասէր, բայց իր անհեռատեսութեան ու հեշտասիրութեան պատճառաւ իրմէ հեռացուց ներսէսը ու իրեն թշնամացուց նախարարները և վերջապէս դժբաղդացուց թէ՛ ինքզինքը և թէ՛ հայ ազգը:

Հայաստանի քայքայիչ ներքին կռիւները բնականաբար անտարբեր աչքերով չէր զիտեր մեր ռխերիմ թշնամին, Պարսիկը: Ասոնց թագաւորը, Շապուհ Բ., առիթը ներկայացած գտաւ Հայաստանը իւրացնելու և քրիստոնէութիւնը ջնջելու համար, մանաւանդ որ Հոռովմէական թուլամորթ կայսրերը խոստացած էին՝ Հպաշտպանել հայերը: Ուստի երբ հայ նախարարներու մէկ մասը կարճատուութեամբ ու վրէժխնդրութեամբ կուրացած՝ զիմեց մեր թշնամուոյն օգնութեանը ընդդէմ իր բնիկ թագաւորին, Շապուհ Բ. Հայաստան զրկեց մեծ բանակ մը, որուն կ'առաջնորդէին երկու դաւաճան հայ նախարարներ՝ Մերուստան Արծրունի և Վահան Մամիկոնեան:

Արշակ Բ. որ հակառակ իր կարճատեւ ու ոճրագործ բնաւորութեան՝ կրողի ու հայրենասէր էր, հաւաքեց իր ուժերը և պատերազմի դաշտ նետուեցաւ: Ահելի վտանգին առջեւ իրեն միացան ժողովուրդին մեծ մասը և նախարարներէն ալ շատեր: Թագաւորը և մեր քաջ սպարապետը Վասակ Մամիկոնեան, ոգեւորուած բանակներու գլուխն անցած՝ գրեթէ չորս տարի զիմազրեցին և յաճախ մասնակի յաղթութիւններ ալ տարին Պարսից և անոնց միացած ազգաւա Մերուստանի ու Վահանի վրայ: Սակայն երկարատեւ պատերազմներէն ձանձրացած՝ Արշակի հաւատարիմ մնացած նախարարներէն շատեր ալ սկսան լքել զայն և մէկիկ մէկիկ Շապուհ Բ.ի բարեկամութիւնը փնտռել: Արշակ Բ. կէս մը այդ զրութենէն նեղը ինկած և կէս մըն ալ Շապուհի սուտ երդումներուն վստահելով՝ Վասակ Մամիկոնեանի հետ գնաց Պարսից մայրաքաղաքը, Տիգրոն: Նենգամիտ պարսիկը շուտով զրօնք իր երդումները: Ան Վասակը, մեր

մեծանձն սպարապետը, սպաննեց՝ ողջ ողջ անոր մորթը քերթել տալէ յետոյ, իսկ Արշակն ալ շղթայակապ բանտարկեց Անյուշ բերդը ուր նա ատեն մը ետքը անձնասպան եղաւ, երբ լսեց Հայաստանի դժբախտութիւնը: Իսկ օտար պատմիչներ, — Ամմիանոս և Սողոմէնոս, — կը տեղեկացնեն թէ Արշակ հաւատքը չուրանալուն համար կտտամահ եղած է:

Արշակ ու Վասակ հազիւ հեռացած էին Հայաստանէն՝ Շապուհ աւելի մեծ բանակ մը տրամադրեց ուրացեալ Մերուստանի ու Վահանի, որպէսզի նուաճեն մեր հայրենիքը ու զայն Պարսկական կրօնին դարձնեն: Այս դաւաճանները անշուրջ չարիքներ գործեցին: Պաշարեցին Արտոգերից բերդը, ուր ապաստանած էր Փառանձեմ թագուհին, որ իրեն հետ գտնուող հայ քաջարի բանակով 14 ամիս զիմազրեցին թշնամի գերազանց ուժերուն: Բայց յետոյ սոսկալի համաճարակ մը կոտորեց իր զինուորներուն մեծ մասը և հայ թագուհին ստիպուեցաւ անձնատուր ըլլալ: Իբր գերի տարուեցաւ Շապուհի: Մեր պարկէշտ թագուհին չուզեց յօժարակամ ծառայել արքայից արքային ստորին կիրքերուն, ուստի նա գազանացած՝ սպաննեց զայն ցիցի վրայ հանել տալով: Շապուհ և անոր հլու գործակատարները, — զրուստան Մերուստանն ու Վահանը, — դեռ ուրիշ չարիքներ ալ գործեցին: Ասպատակեցին Արտաշատ, Վաղարշապատ, Վան ու շատ մը ուրիշ քաղաքներ, աւարեցին ու այրեցին գանոնք և հարիւրհազարաւորներ անոնց բնակիչներէն գերեզմարեցին դէպի Պարսկաստան:

ԿԻՐՈՍԻԱՆ ԶԱՆԾԱՆՔ. — Պարսիկները և դաւաճան Մերուստանն ու Վահանը այս խժոժութիւնները կը գործէին ոչ միայն քաղաքական, այլ նաեւ կրօնական նպատակաւ: Անոնք կ'ուզէին ջնջել քրիստոնէութիւնը, որուն ռխերիմ թշնամին էր Շապուհ Բ.: Նա Պարսկաստանի մէջ արդէն նահատակել տուած էր բազմաթիւ, — պարսիկ պատմագրի մը վկայութեամբ մինչեւ 200.000, — քրիստոնէաներ և յաջողած էր հոն գրեթէ բոլորովին ջնջել քրիստոնէութիւնը: Իր նպատակն էր նոյնն ընել նաեւ Հայաստանի մէջ: Իր ձեռքին մէջ հլու դերակատարներ էին այդ գործին մէջ տխրահոջակ, ազգադաւ, փառասէր ու անգութ Մերուստան Արծրունին և Վահան Մամիկոնեանը: Ասոնց գործակցութեամբ Շապուհ «կը ջանար խափանել քրիստոնէական ամէն կարգ կանոն» (Խորենացի): Պարսկաստան կ'աքսորէր եպիսկոպոսներն ու քահանաները, որպէսզի կրօնքի պաշտօնեաներն ու պաշտպան-

ները պակսին: Կը քանդէր եկեղեցիները և ատրուշաններ կը շինէր: Յունարէն զրքերը կը ժողվէր ու կ'այրէր՝ ուզելով խափանել քրիստոնէական ուսումը, քանզի յունարէնով էր հայ եկեղեցւոյ ծիսակատարութիւնը: Ատկէ զատ «կը բռնադատէին բազմաթիւ մարդիկ՝ թողելու աստուածապաշտութիւնը և դառնալու մաղղեգական պաշտամունքին, և երբ մէկն ալ յանձն չէր առնէր՝ ուրանալ քրիստոնէութիւնը, կը սպաննէին ամէնքն ալ չարաչար մահուամբ» (Բ. Փաւլոստոս): Շապուհ բռնաբարութեան ու մասնաւոր չարչարանքի կ'ենթարկէր մանաւանդ «ազատներու և նախարարներու կիները» զանոնք կրակապաշտութեան մոլորցնելու և անոնց այրելը, եղբայրները և ծնողքը ստիպելու, որպէսզի իրեն հպատակին: Երբեմն ալ պարկեշտ ու ամօթխած կիները «մերկացնելով՝ ճամբուն երկու կողմերը շարել կուտար որ մէջտեղէն անցնելով հաւնածը զատէ»: Այո՛, զանոնք նոյնիսկ «Բերդերու պարիսպներէն մերկանդամ կախել կուտար, մինչև որ մեռնին: Եւ մարմինները կը թողուէին թռչուններու կերակուր, մինչև որ կ'ամալսքներն ալ լուծուին ու թափին» (Օրմանեան):

Բայց Շապուհի և իր դաւաճան հայ գործակիցներուն բռնութիւնն ու զազանական արարքները հակառակ արդիւնք տուին: Ատով հայեր մեծամասնութեամբ փոխանակ պարսկական կրակապաշտութեան յարելով՝ աւելի զգուեցան անկէ, և մղուեցան զոհելու ստացուածք և կեանք քրիստոնէութեան հաւատարիմ մնալու և զայն պաշտպանելու համար: Հազարաւորներու կը հասնի թիւը այն այրերուն, որոնք մարտիրոսուեցան և բիւրաւորներ են այն կիները, որոնք աքսորուեցան, կախուեցան և նոյնիսկ ցցահան եղան, զի չուզեցին ուրանալ իրենց սուրբ հաւատքը: Այդ շրջանի բազմաթիւ մարտիրոսներու մէջէն միայն երկուքին անունները մեզի հասած են: Անոնք են

ՉՈՒԻԹԱ ԵՒ ՀԱՄԱԶԱՍՊՈՒՀԻ. — Առաջինը կը սերէր այն հրեաներէն, որոնք Հայաստան բերուած էին Մեծն Տիգրանի օրով և ապա քրիստոնէական կրօնն ընդունած ու հայացած: Ուստի ժառանգած էր իր ցեղին սեփական խոր կրօնասիրութիւնը, արդէն մանկութենէն բան մը ունէր Հայր Աբրահամի զոհաբերող հաւատքէն: Ապա աշակերտած էր Մեծն Ներսէսի, որուն ձեռքին տակ իր հաւատքը աւելի պայծառացած ու խորացած էր: Յետոյ անկէ ձեռնադրուած էր իբրեւոր Երտաշատի մէկ համայնքին: Իր հոգե-

ւոր հօր, Ներսէսի նման իր ամբողջ սրտովը կը սիրէր Քրիստոսն ու իր խնամաց յանձնուած հօտը: Մասնակից էր անոր ուրախութեան և վիշտին ու տառապանքին: Երբ իր թեմի ժողովուրդը վտարուած տունէ ու հայրենիքէ՝ դահիճներու հարուածներուն տակ դէպի Պարսկաստան կ'աքսորուէր՝ հոն տուայտանքի բաժակը մինչև մրուրը ըմպելու համար, զերեմարները պատկառելով Ջուլիթայի «բարձր ու անձնեայ» հասակէն և հեղինակաւոր նկարագրէն՝ զայն ազատ ձգեցին: Բայց նա հետեւեցաւ գերիներու կարաւանին ըսելով, «Պէտք չէ որ հովիւը լքէ իր հօտը: Անձնուէր հովուի արժանավայել խօսք, որ մեր վերջին տարագրութեան ատեն կրկնուեցաւ ու գործադրուեցաւ նաեւ Նիկոմիդիոյ առաջնորդին, ծերունազարդ Յովակիմ Արքեպիսկոպոսին կողմէն, որ նախընտրեց իր ժողովուրդին հետ Տէր-Չօր երթալ ու անոր չարչարանքին բաժնեկից ըլլալ, թէեւ իրեն թուլատրուած էր իր անդը մնալ:

Երբ գերիներու կարաւանը Պարսկաստան ժամանեց, Ջուլիթա Շապուհի առջեւ հանուեցաւ Սա կատղեցաւ, երբ իմացաւ որ երէցը եկած էր, որպէսզի իր ժողովուրդը քաջալերէր՝ «ամուր բռնելու քրիստոնէական օրէնքները»: Ուստի «հրամայեց որ ձգէ քրիստոնէական հաւատքը (Սորենացի): Բայց «զինք տարհամոզելու և մոլորցնելու բոլոր փորձերը անցան ապարդիւն... Իրեն համար այլեւս կեանքը կը մնար միայն Քրիստոս, ուստի և մեռնիլը կը նկատէր շահ: Իր այս կամաւոր մահը կրնար վեր բարձրացնել իր ժողովուրդին հաւատքն և բարոյական կորովը: Ջուլիթա առաջնորդուեցաւ սպանման վայրը... ծնրադիր՝ բարի հովիւը կատարեց իր աղօթքը: Գոհ էր որ պիտի ըմպէր նահատակութեան բաժակը իր հաւատքին ու իր ժողովուրդին... Սուրբը արիութեամբ երկարեց իր վիզը դահիճին առջեւ, որ սուրով վերջ տուաւ անոր առաքինի և ժողովրդանուէր կեանքին» (*):

Միւս մարտիրոսն է Համազասպուհի Մալիկունեան, կինը Գարեգին Ռշտունիի, որ չէր ուզած համակերպիլ Շապուհի կամքին և փախած: Չայն անձնատուութեան բռնադատելու համար՝ Մերութան ու Վահան անոր այրը բանտարկեցին Վանայ բերդին մէջ և հրամայեցին «չարչարելի եթէ չընդունի մաղղեգական օրէնքը»: Համազասպուհի բոցավառուած Քրիստոսի սէրով տեղի


(*) Խաչատուր Եպիփկ. Տրպիկունի «Աշխարհիս Լոյսն Ի Հայս» էջ 350-351:

չտուաւ ո՛չ խոստումներու, ո՛չ սպառնալիքներու և ո՛չ ալ չարչարանքներու առջեւ, միշտ քաջութեամբ դաւանեցաւ իր Տէրն ու Փրկիչը: Ուստի «մօրէ մերկ ըրին զինքը և ոտքերէն կապ ձգելով զլիւիվար կախեցին» Վանայ բերդին ծովահայեաց աշտարակներէն մէկէն: Եւ այդպէս ձգեցին, մինչեւ որ սպիտակ ու գեղեցիկ մարմինը քայքայուեցաւ և ոսկորները վար՝ թափեցան: Զանոնք իբր սուրբ նշխարներ հաւաքեց իր դայեակը և թաղեց Վանայ մօտակայ Զորավանքը: Ինչպէս խաչատուր Արք. կ'ըսէ, «նահատակուած մարմինը անյայտացաւ, բայց նահատակուածին տեսիլը՝ իր գաղափարական գեղեցկութեամբը թովիչ՝ մնաց անջինջ Հայաստանեաց մարտիրոսազրութեան կարմիր էջերուն մէջ և մեր ցեղին յաւէտ նահատակուած սըրտին մէջ»:

Բանբերի յաջորդ թւոյն կը ձգենք խօսիլ՝ թէ ի՞նչ եղած է Մեծն Ներսէս Պարթևի գերը քաղաքակա՛ն այս տխուր անցուղարձի ատեն հայ մարտիրոսազրութեան այս շրջանին: Այս յօդուածը կը վերջացնենք յայտարարելով թէ Շապուհ Բ. և տխրահռչակ հայ անուն Մերուժանն ու Վահանը իրենց արքանեակներով միասին անարգեցին ու նահատակեցին Համազասպունհին ու Զուլթան և անոնց նման բիւրաւոր հայ կիներ, օրիորդներ և երիտասարդ ու չափահաս այրեր, որպէսզի ցեխի մէջ թաղեն հայ կնոջ պատիւը, ջնջեն քրիստոնէութիւնը և անճիտեն հայ ցեղը: Բայց անոնք իրենց բոլոր զազանային և անբարոյիչ վայրագութիւններով միասին չհասան իրենց նպատակին: Անոնք միայն միջոց եղան որ աւելի խոր արմատներ ձգէ քրիստոնէութիւնը հայուն սրտին մէջ, և Համազասպունհներուն ու Զուլթաններուն փառաւոր յիշատակը 16 դարեր ետքն իսկ փողփողի աղամանդի պէս և մղէ հաւատացեալ հայ կիներ ու այրը մէկ կողմէն գուրգուրալու իր ընտանեկան սուրբ պատուոյն վրայ, իսկ միւս կողմէն՝ ոտնակոխելու աշխարհի սին վախերն ու հրապոյրները և հետեւելու խաչի փշոտ ճամբէն, իբր հայ ու՛ քրիստոնեայ:

Այո՛, Շապուհի անգութ հալածանքները նոյնիսկ պատճառ դարձան որ հայը իր մեծամասնութեամբ արթննայ, մէկդի դնէ անմիաբանութիւնը, կռուի հասարակաց թշնամւոյն դէմ և ապահովէ իր գոյութիւնը: Բայց այդ մասին յաջորդիւ:

Բրօք. Գ. Գ. ԽԱՅԻԿԵԱՆ



ՊԱՏՈՒԾՈՅ ԽՕՍԲԸ

«Վասնզի քու բոլոր անունէդ վեր մեծցուցիր Քու խօսքը»:

Սաղմ. 138. 2

Սաղմ. 119, 103: Սաղմ. 19, 10: Երեմ. 15, 16:

Ա. Պետ. 2. 2:

Ով դու կենդանի, գորեղ, բան վսեմ, փառաց թոյսիդ մէջ ես շաղուիլ կ'ուզեմ, քու Աստուածային օրհնեալ շողերէդ, քիմքիս կը կաթի դրախտէն հոտաւէտ Բիւր ծաղիկներու հիւթէն հաւաքուած Մաքուր խարխսի մէջտեղ գետեղուած Զտուած ջինջ մեղր... կաթը անխարդախ... Ա՛հ, համր է լեզուս... տուր ինձ ինքնաբուղիս, Յորդափոս գետէդ, խօսքէդ վեհափառ, Հոգւոյդ ստինքը, որ ես անդադար, Ծծեմ քաղցր հիւթն այս, տամ երակներուս, Սրտիս թելերուն...: Եւ յօդուածներուս թարմ ոսկորներէն խողովակներով Բաժնեմ ծուծերուս, ներշնչեալ հոգւով: Եւ մտածմունքներս, խորհուրդներս տկար, Ջրեմ, ո՛հ, Տէր իմ, խօսքովդ կենսաբար:

Բայց ո՛հ, ոչ այսքան, այլ պայծառ գարնան, Դու Արեւ, ծագէ հոգւոյս վրայ խորան, Ու թափանցէ ներս շողերդ հրեղէն, Վառելու սրտիս ծածուկ անկիւններն, Որ փափուկ կեանքիս աճման, զարգացման, Արգելքներ տալու պատճառներ չըլլան. Ու չելլեն բոյսեր, փուշեր թունաւոր, Եւրջն իմ հոգեծիւ սերմիս նուրբ ու նոր, Եւ տուր որ ծաղկիմ, ըլլամ պտղատու, Էդեմածառ մը բուրելու հեռու, Թշուա՛ռ աշխարհին, որբին, տնանկին, Որոնք քու խօսքէդ երեք լուր չունին: Խօսքիդ շողերէն թող ես քեզ մի փունջ,

կապուղիմ շատերուն սրտաց մէջ անվերջ,
եւ ամէն անգամ որ զայս հոտուրտան,
Տեսնեն քեզ Տէ՛ր իմ, բուռն կեանքդ աննման:

*
*
*

Ա՛հ, քաղցր է խօսքդդ ու խի՛ստ հասեի,
Որքա՛ն Թանկագին, որքա՛ն ցանկալի,
Հոդէ բովքի մէջ եօթն անգամ գտուած,
Արծաթէն մաքուր ու շատ փորձուած,
Ոսկիէն աւելի ընտիր է ինծի...:
Մաքուր խողովակ մ'ըլլամ ես Անոր:

Սաղմ. 12. 6: Սաղմ. 119. 105: Յոբ. 23. 12:
«Ես կը ցնծամ քու խօսքերովդ, շատ աւար գրու-
նողի պէս»: Սաղմ. 119. 162:

ԵԴՈՒԱՐԴ ԲԱԳՈՒՊԵԱՆ

ԼՈՒՐԵՐ ՄԵՐ ՍԻՐԵԼԻ ԶԻՆՈՒՈՐՆԵՐԷՆ

Յիսուս Քրիստոսով իմ սիրելի եղբայրս,

Ներկայ նամակովս կուգամ ձեզի քիչ մը տե-
ղեկութիւն տալ իմ այժմու վիճակէս, ներեցէ՛ք
որ աւելի առաջ չկրցի գրել:

Ս.ին հետ ժամը 9ին Օ. հասանք, անմիջապէս
Պատուելիին տունը գտանք և շատ ջերմ ընդու-
նելութիւն գտանք: Ամբողջ օրը անոնց հիւրա-
սիրութիւնը վայելելէ յետոյ, երեկոյեան մօտ
Պատուելին մեզ զօրանոց առաջնորդեց և հոն
մեզ յանձնարարեց հաւատացեալ ենթասպայի
մը, որ փրկութեան բանակի անդամ է: Շնորհիւ
այս յանձնարարութեան մենք կրցանք առաջին
Կիրակիէն իսկ Աւետարանական եկեղեցին պաշ-
տամունքի երթալ, եթէ ոչ առաջին շաբաթները
զօրանոցէն դուրս ելլելու հրաման չկայ...:

Զինուորական ծառայութիւնը այն աստիճան
դժուար չեմ գտներ, որքան որ կ'երեւակայէի...:
Մարտէյլէն շատ յուզումով բաժնուեցայ իմ
սիրելիներէս և Աստուծոյ գաւազներու ընտանիք
եկեղեցիէս: Հոս հասնելուս բոլոր սրտով իմ
Փրկիչս օրհնեցի զիս այնպիսի տեղ մը առաջ-
նորդած ըլլալուն համար, ուր հոգեւոր մթնոլորտ
մը գտայ, այն մթնոլորտին նման որուն մէջ ես
մեծցած եմ:

Պատուելի Ս.ի ընտանիքը հրաշալի է: Ութը
հոգիներէ կը բաղկանայ. ես բարեկամական կապ
հաստատեցի տունին 18 տարու անդրանիկ գա-

ւակը եղող Բենիամինի հետ: Հոս բողոքակա-
նութիւնը շատ տարածուած է: Ժողովներու
պաշտամունքին միջին հաշուով 50 հոգի կուգայ:
Պատուելին ամէն Կիրակի Օ.ի շրջակայ գիւղերը
Աւետարանչական ժողովներ կ'ընէ:

Իմ հոգեւոր յարաբերութիւններէս դուրս, զօ-
րանոցի կեանքը միօրինակ է: Անիկա ինծի
դպրոցի մը պէս կ'երեւի, ուր կարելի պիտի ըլլայ
անձնուրացութեան և զոհողութեան մէջ զօրա-
նալ: Նորեկ ըլլալը միջոց մըն է չարչարանքի և
յարատելութեան դասերը սորվելու: Նաեւ աշխար-
հային կեանքին պատկերը ուսումնասիրելու
զանազան դէմքեր տեսնելով: Զօրանոցը դպրոց
մըն է նաեւ յարգանք և կարգապահութիւն սոր-
վելու: Բոլոր այս հակապատկերները իմ հաւա-
տացեալի աչքերուս առջեւ շատ աւելի ցցուն
կերպով կը ներկայացնեն Աստուծոյ գործերը:

Մարգանքի ժամը մօտեցաւ, և ստիպուած եմ
վերջացնել նամակս. բարեւելով զձեզ և նաեւ
եկեղեցիին:

Յիսուս Քրիստոսով ձեր եղբայրը, որ ձեր
աղօթքներուն կը կարօտի:

Պ. Պ.

0...

Եթէ զիս հարցնելու ըլլաք, Տէրոջմով առողջ
եմ և այն վստահութիւնն ունիմ թէ Ինքը իմ
ներկաս և ապագաս Իր ձեռքին մէջ ունի և թէ
մահուան շուքին ձորին մէջ ալ պատիմ, չարէն
պիտի չվախնամ, վասն զի Ինք ինծի հետ է:
Երկու տարի բացակայ պիտի ըլլամ իմ եղբայր-
ներէս և քոյրերէս, բայց իմ միտքս և աղօթք-
ներս միշտ ձեզի հետ են:

Հոս ազատ եղած օրերս ժողովարան կ'եր-
թամ, թէ և ինծի շատ աւելի անոյշ պիտի ըլլար
ձեզի հետ Աստուծոյ տան մէջ զԻնքը փառաւո-
րել, քանզի հոգ աւելի կ'օրհնուէի, այսու ամե-
նայնիւ ասով ալ զոհ եմ, քանզի եթէ չըլլար
աւելի զէշ էր:

Երբեմն ինքզինքս բանտարկեալի մը պէս
կզգամ, բայց երբ Տէրոջը կը մօտենամ և Անոր
խաչին առջեւ զԻնքը կը վայելեմ, բոլոր նեղու-
թիւններս ու դժուարութիւններս կ'անհետանան:
Աղօթեցէ՛ք ձեր եղբոր համար:



Ս.

Le Gérant : H. N. GHAZAROSSIAN

Imp. Y. ARMEN & Cie 39 Rue St - Sournin Marseille

ՅԻՍՈՒՍ ԱՄԵՆԱԳԵՂԵՑԻԿԸ

Գերմաներէնէ՝ Յ. Ն. Ղ.



- 1 Դու գեղեցիկ ես
Տէր Յիսուս, ա՛հ միշտ Քեզ
Դիտեմ, յառիմ եւ զմայլիմ:
Փրկիչն իմ հոգւոյն
Տէր, գանձն իմ թագուն
Խարխսին հաստատ խոր յոյսին իմ:

- 2 Դեղ են անտառներ
Գեղազոյն են դաշտեր
Գարնան ժպտուն եւ զով առտուն
Յիսուս աւելի՛
Հոգւոյս սիրելի
Որ կուտայ ինձ սուրբ կեանք ցնծուն:

- 3 Դեղ են ծաղիկներ
Գեղազոյն մարդիկ դեռ
Զինչ օրերուն պատանեկան,
Բայց շուտ պիտ անցնին
Եւ ապականին
Յիսուս մընաց միշտ յաւիտեան:

- 4 Սէր եւ Տէր Յիսուս
Թող Քեզ գովէ լեզուս
Զի Դուն միայն ես արժանի
Իմին օրհնութեան
Պաշտանքիս համայն
Զի ըրիւր զիս Հօրն պիտանի:

ՅՈՒՇԱՐՁԱՆ ՎԵՐ. Ա. Զ. ԵՂՈՅԵԱՆԻ

Վեր. Ա. Զ. Եղոյեանի բազմաթիւ բարեկամները ամէն հրկիրներէ իրենց թղթակցութիւններուն մէջ յաճախ անդրադարձան նա զաղափարին թէ մեզի, ողջ մնացողներուն համար ճիշդ պիտի ըլլար բոլորովին լռութեամբ անցնիլ մեր հոգեւոր հօր յիշատակներուն վրայէն և անոր ըրած գործն ու ձգած ազդեցութիւնը պատմութեան բազմածածք ծալքերուն մէջ կորսուած նկատել, պէտք չէ՞ որ գալիք սերունդին համար Վեր. Ա. Զ. Եղոյեանէն յիշատակ մը մնայ:

Այս բաղձանքը արդարեւ արտայայտուեցաւ Հայ Աւետարանականութեան բոլոր խաւերէն: Ու այս իրաւունքով, քանզի Վեր. Ա. Զ. Եղոյեան յայտնապէս մէկ ուղղութեան մը չէր վերաբերէր: Ինքը ամենուն համար էր, ամէն բեմէ կրնար խօսիլ, քանզի Քրիստոսը կը քարոզէր, ամէնն ալ կը սիրէր, քանզի անոնք ամէնն ալ Քրիստոսէ սիրուած էին:

Ու և հաւատացեալ մը, ո՛ր յարանուանութեան կամ ուղղութեան ալ վերաբերէր, Անոր սրտին մէջ տեղ ունէր:

Այս պատճառաւ յարմար սեպուեցաւ որ սիրելի ննջեցեալին յուշարձան մը պատրաստուի, Մասնախումբի մը միջոցաւ, որուն մէջ Աւետարանական ամէն ուղղութեան անձեր գտնուին:

Այս յուշարձանը պիտի ըլլայ գիրքի մը ձեւին տակ:

Գիրքը պիտի պարունակէ առ այժմ հետեւեալ կէտերը. —

ա. Վեր. Ա. Զ. Եղոյեանի կենսագրականը:

բ. Անոր անախիւ քարոզները, որոնցմէ բաւական մը մեր ձեռքն ունինք:

գ. Անոր թղթակցութիւնները, որոնք բացուեցան աշխարհի ամէն կողմը գտնուող Հայ հաւատացեալներու հետ, իրեն ուղղած հարցումներու առթիւ և որոնց նա մեծ իմաստութեամբ պատասխանեց: Գիրքը պիտի պարունակէ թերեւս 350-400 էջ:

Որպէսզի յուշարձանը կարելի եղածին չափ կատարեալ և օգտակար ըլլայ, պիտի խնդրէինք ընթերցողներէն հետեւեալ կէտերը նկատի առնել. —

ա. Անոնք որ նամակ մը ունին Վեր. Եղոյեանէ, գրուած ու և հոգեւոր հարցի մը վերաբերեալ, թող հաճին վարը յիշուած անձերէն իրենց ամենէն մօտ գտնուողին յանձնել: Այդ նամակները օրինակուելէ յետոյ պիտի վերադարձուն իրենց:

բ. Հոգեւոր ու և հարցի մը մասին եղած խօսակցութիւն մը, որ որպէս խօսակցութիւն եղած է և կրնայ տպուելով օգտակար ըլլալ, զրի առնուելով կրնայ Բանբերի խմբագրութեան ղրկուիլ որպէս զի կարենանք զանոնք կարգի դնել տպուելէ առաջ:

գ. Ննջեցեալ սիրելիին մասին ու և դէպք և պատահմունք որ յիշատակելու արժանի է, հաճեցէք կրկին Բանբերի խմբագրութեան ղրկել:

Գրքի հրատարակութեան համար նախատեսուած բոլոր ծախքերը ապահովուած են:

Տպագրելը պիտի ըլլայ Մինաս եղբ. Պօօօբեան:

Բանբեր մերթ ընդ մերթ, եթէ Տէրը կամի, յարմար ժամանակին տեղեակ պիտի պահէ իր ընթերցողները զրքին մասին:

Այժմ ձեր քով գտնուած նամակները հաճեցէք ղրկել հետեւեալ հասցէներուն, որոնք մասնախումբի անդամներ են.

M. Séferian, B. P. 303, Alep (Syrie)

M. Bozoklian, B. P. 319, Alep (Syrie)

M. Harpoutlian, 2027 Crary Ave. Altadena California (U. S. A.)

M. Jizmedjian, 665, Vanderbilt Ave. Brooklyn N. Y. (U. S. A.)

և խմբագրութեանս:

Ս Տ Ա Ց Ա Ն Ք

Աւետարանի Զայն. Հոգեւոր ամսաթերթ, խմբ. արտօնատէր Խ. Թ. ՍԱՐԵԱՆ

2, Rue Ahmed Pacha Hasanen
Shoubra Caire (Egypte)

Եսոբհաց ցօղեր. Տարեգրքոյկը. Ե. տարի, հեղ. Լ. ՍԻՄՈՆԵԱՆ

Pharmacie Nahr
Rue Nahr - Beyrouth